

ՀԱՂԱՐԱՏԻ ԸՌՈՋՆՈՐԴՆԵՐԸ¹

Հաղբատի առաջնորդներու շարքն ու պատմութիւնը կրնանք սկսիլ իւրացնելով Յովհաննէս Ղրիմեցիի խօսքերը «Առ լրումն բովանդակութեան կարգի աթոռայ համօրէն առաջնորդաց Հաղբատայ, որք միանգամ ի սկզբանէ եւ այսր յաջորդեցին յայտ աթոռ, յորով տաժանեցաք, բայց յանհարկից եղեւ գիւտ ամենայնին, ուստի ի շարակարգութեան աստ նոցին, ի միջոց ինչ ժամանակաց, մանաւանդ ի չորեքտասան եւ ի հնգետասան դարու պակասին ոմանք յառաջնորդաց, որք թերեւս յապա ժամանակս եկեացն ի յայտ ի հին պատմադրաց, որք ոչ եկին ի ձեռս մինչեւ ցայսօր կամ յարձանագրաց այլոց վանորէից կողմանց եւ կամ մանաւանդ ի մատենէն անտի յիշատակարանաց յորժամ ի յայտ եկեացն ուրեք (չատ կարեւոր է այս տեղեկութիւնը, որ կը յայտնէ ու կը վկայէ թէ Հաղբատ ունեցած է իր գաւազանդիրը), եւս եւ յարձանագրոց խաչարձանաց եւ մահարձանաց ոմանց եղելոց ի կալուածս Հաղբատայ աստ եւ անդ յանկոխ վայրս բազմախիտ անտառաց խորածորոց եւ լեռանց եւ մանաւորապէս առ աւերակօք կամ առ տեղեօք հնագոյն խրճիթաց եւ ճգնարանաց նախնի միանձանց Հաղբատայ, որոց անենայնի գհեա կրթիլ անձամբ եւ զնեւ աջօք Հյաջորդեցաւ մեզ» (Թ. 239, էջ 105):

Կարելի է ըսել թէ Հաղբատի առաջնորդներու կամ վանահայրերու գաւազանագիրքը եւ անոնց պատմութիւնը կը պարտինք Յովհաննէս Ղրիմեցիի, որ ջանացած է հնարաւորութեան սահմանին մէջ կատարելապէս գործ մը երեւան հանել. այդ յաջորդութեամբ պիտի պատկուէր մասով, եթէ իր ակնարկած Գաւազանագիրք-մատենը աչքին առջեւ ունենալ կարենար: Անոր գրութեան մեծապէս օգտուած են եւ պակասներ լրացնել ու սխալներ սրբագրել ջանացած են Երզնկեան (Արարատ 1888, էջ 262—265) եւ Brosset, Description... էջ 71):

Հաղբատի առաջին առաջնորդը կը ներկայանայ Սիմէոն, որ գիտէ խոհմօրէն կառավարել բազմաթիւ միաբաններ. «Յաւուրս

¹ Հաղբատի հիմնարկութեան պատմութիւնը եւ քանի մը կարեւոր գիտելիքներ նկատի առած եմ Սահակի մասին գրած առեւն (Հանդ. Ամս. 1958, էջ 265):


Կոնստանդնուպոլիսի ճգնաւորաց Լորդեաց աշխարհին հաւատարմութեամբ արանականք ըստ յառաջասացեալ Կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսի, որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ եւ Սանա. Էջ հանդէս միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ արանց Շ. ոց: Եւ առաջնորդ Սանահնի՝ Յովհաննէս Գիտնական այրն Աստուծոյ, իսկ Հաղբատայ Սիմէոն ճգնադրեաց ծառայն Գրիստոսի» (Աստղիկ Պատմ. էջ 181): Նոյնը կը հաւաստէ Յովհ. Ղրիմեցի աւելի ընդլայնելով «Բայց զի խորովանոյ թագուհին արդէն նախ քան զաւարտումն շինութեան ուխտիս իբր տասնամօք յառաջ վախճանեալ էր, որպէս երեւի յարձանագրիս անտի սորին մենաստանի, պարտ է զնեւ, թէ նա անդէն ի կենդանութեան իւրում որոշեաց լինել առաջնորդ Հաղբատայ զՍիմէոն, վասն որոյ եւ ի սկզբանէ հիմնարկութեան մինչեւ ցաւարտումն շինութեան տաճարին եղեւ նա ինքն Սիմէոն անմիջական հոգաբարձու եւ աշխատակիր ի շինութեան անդ, որպէս ցուցանէ ինքն յարձանագրի իւրում յասեւն՝ Ի Նի թուականիս (991) Սիմեոն հայր եւ Տիրանուն երէց շինեցաք եկեղեցիս Սմբատայ եւ Գուրգէնայ փրկութան: Եւ այսպէս Սիմէոն եղեւ ոչ միայն առաջին վանահայր կամ առաջնորդ ուխտիս, այլ եւ անընդմիջական պատճառ շինութեան նոցա ըստ հոգաբարձութեան կամ ըստ վերակացութեան» (Թ. 239 էջ 10): Ուստի եթէ խորհրդէ թէ Սիմէոն հիմնարկութեան ատենէն սկսած՝ առաջնորդութիւն ըրած ըլլայ, այն ատեն քառասուն տարւոյ առաջնորդութիւն մը պիտի ընդունինք, իսկ եթէ 991ին սկսած այն ատեն շատ աւելի նուազ: Վերջին անգամ կը յիշուի 1005 թուակիր արձանագրութեան մը մէջ²:

Կորովի անձ է Սիմէոն որ գիտէ առաջնորդել, զարգացնել ու շինեցնել: Անոր աջակից եղած է Տիրանուն, որուն մասին գծարխտարար սակաւ տեղեկութիւն ունինք:

Տիրանունի 996ին Սիմէոնի յաջորդը կը նշանակուի «Լ. արատ» ամսագրին մէջ (1901,

² Առ արեւմտեան որմով մատրան Ս. Սիոնի «Ի ՆՊ» (1005) թուիս ի հայրութեան Սիմեոնի եւ Աթանազիոսի եւ Փիլաքսոս կանոնեցաք զսուրբ խաչս ի փրկութիւն հոգւոց մերոց եւ ամենայն երկրպագուաց իւրոց եւ աւգնականութիւն թագաւորիս մերոյ Գաւթի» (Թ. 239, էջ 106, Brosset, էջ 42, Արարատ 1887, էջ 217):

էջ 279), սակայն չէ ըսուած ինչպե՞ս ու տուեալի վրայ: Մինչ անո՞րք մեցի կը գրէ «Յեա Սիմէոն...» (այսինքն ջորդութեամբ երեւի նստեալ առաջնորդ ուխտիս ՅՈՒՎՍԷՓ վախճայր» (Թ. 239 էջ 106): Եւ այս է ճիշդը. 1008ին գրուած արձանագրութեան մը մէջ յստակ կայ «Ի ՆՊ է ի թագաւորութեան Գաւթի եւ ի հայրութեան Յովսէփայ եւ Մեսրոպ կանոնեցի զսուրբ Նշանս յուխտիս Հաղբատայ» (Թ. 239 էջ 106 եւ Արարատ 1886, էջ 522):



ՀԱՂԱՐԱՏ—ԵԿԵՂԵՑԻ

Անոր յաջորդներու անունները մեղի չեն հասած: Տասնեակ տարիներ յետոյ Երզնկեանի համեմատ իրարու կը յաջորդեն 1068 ՍԱՐԳԻՍ Ա.

1086 ՍԱՐԳԻՍ Բ. արքեպիսկոպոս³ ՅՈՒՎՍԷՓ արքեպիսկոպոս, Դաւիթ թագաւորի ժամանակ,

ԲԱՐՍԵՂ արքեպիսկոպոս, Թամար թագուհիի կառավարութեան շրջանին, ԳԵՈՐԳ արքեպիսկոպոս, Ներսէս Շնորհալիի կաթողիկոսութեան ատեն, ԳՐԻԳՈՐ ՏՈՒՏԵՈՐԴԻ, Գրիգոր Տղայի հայրապետութեան շրջանին,

³ 1068ին յիշուած Սարգիսը եւ 1082ին եպիսկոպոսացած Սարգիսը, որ մինչեւ 1089 ստոյգ կը յիշուի, գուցէ միեւնոյն անձն ըլլան:

Եւ ապա ՅՈՒՎՍԷՓ ՍԱՐԳԻՍԻ եւ հուսկ յետոյ ԴԱԻԹ ԳՈՐԵՍԵՅԻ եւ անկէ վերջ ՅՈՒՎՍԷՓ Ա., Գուրորդի, Զաքարէ եւ Իւանէ իշխաններու (Արարատ 1887, էջ 263):

Այս անուանացանկը սրբադրութեան կը կարօտի:

Թէ 1068ին Հաղբատ ունեցած է Սարգիս անուն առաջնորդ մը եւ ապա թէ անոր յաջորդած ըլլայ ուրիշ Սարգիս մը, այդ չենք կրնար հաստատել, բայց գիտենք որ 1082 Հաղբատ կ'ունենայ Սարգիս արքեպիսկոպոս

վանահայր մը: Միւթար Անեցի էջ 106 եւ Կիրակոս Գանձակեցի (էջ 56) կը հաղորդեն թէ Հաղբատի մէջ 1082ին տեղի կ'ունենայ Ժողով մը եւ հոն Անիի Բարսեղ եպիսկոպոսը կաթողիկոս կ'ընտրուի՝ յարմար դատուելով: Հայրապետական ձեռնադրութիւնն ալ կը կատարուի նոյն վանքին մէջ եւ կարելի է մտածել՝ թէ այդ օրը որքան շատ Ժողովուրդ հաւաքուած էր հոն, ուր Կիւրիկէ թագաւորն եւս իր արքունիքով փութացած էր: Քանի մը օր յետոյ ուրիշ ճոխ հանդէս մը տեղի կ'ունենայ եւ այդ՝ Հաղբատացիներու համար աւելի հաճելի է, զի Կիւրիկէ թագաւորը իր դրան երէցը Սարգիս Հաղբատի եպիսկոպոս ձեռնադրել կու տայ «Եւ յայնմ հետէ եղեւ աթոռ եպիսկոպոսի» (Կիր. էջ 56): Յովհ.

Ղրիմեցիները կը գրէին—ամփոփելով պատմագիրներու տեղեկութիւնները— «Նոյն բնիկ թեմորայք նորա եւ ապա սկսան ընդարձակել ի ժամանակէ անտի, յորում այս մենաստան եղեւ արքեպիսկոպոսութիւն յաւուրս կաթողիկոսութեան Գրիգորի Վկայասէրի եւ թագաւորութեան Կիւրիկեայ արքայի Բագրատունւոյ, որ նստէր ի Լոռի: Քանզի նորին Վկայասէրի հաւանութեամբ իբրեւ ձեռնադրեցաւ աստէն ի Հաղբատ քեռորդի նորա Բարսեղ արքեպիսկոպոս Անի քաղաքի ի Յովսէփայ կամ ըստ այլոց ի Ստեփաննոսէ Կաթողիկոսէ Աղուանից կաթողիկոս արեւելեան Հայոց, յամի Տեառն 1082 եւ Հայոց ՇԼԱ, նոյն երկու կաթողիկոսունք ապա ի նմին ժամանակի հրամանաւ վերոյիշատակեալ Կիւրիկէ արքայի զՍարգիս առագ երէց արքունի դրան նորին Կիւրիկեայ ձեռնադրեն միանգամայն արքեպիսկոպոս Հաղբատայ եւ հաստատեալ զայս վանք՝ լինել աթոռ մեծ, ընծայեն սմա թեմա ընդարձակա ի վիճակաց իւրեանց երկաքանչիւր կաթողիկոսունք» (Թ. 239 էջ 99 հմմտ. Մովսէսեան Հ. Ղ. Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը էջ 53—54): Սարգիս կ'ըլլայ ձեռնեցեց եւ ժրջան առաջնորդ եւ կը ստեղծէ հասութարեր աղբիւրներ՝ հետամուտ կ'ըլլայ միաթեան (հմմտ. Թ. 239 էջ 107, Արարատ 1886, էջ 489 1887, էջ 219. Brosset, էջ 43):

Հասած է մեր ձեռքը «Սեծամեծ կայսերաց թուղթ, որ կան հանդուցեալ ի Հաղբատ լուսահոգիքն այնք» (Լուծայ 1898, Ա. էջ 260—264):

Անոր վերջաւորութենէն սկսինք եւ սկիզբը գտնք: «Նմանապէս հաստատ պահօղքն եւ կատարողքն սորին եղիցին օրհնեալք յԱստուածոյ ... յաւտեանս յաւտեանից ամէն: Գրեցաւ ի թուին Հայոց հինգ հարիւր եւ երկու տասանին:» Որ է ըսել 1063ին: Իսկ սկիզբն է «Ի ժամանակս թագաւորացն Յովսէփայ Միքայէլի, Վրաց Բագրատունեան Բագրատին եւ որդւոյ նորին Գէորգեայ եւ Հայոց Գագիկայ եւ որդւոյ նորին Սմբատայ եւ

որդւոյ Աշոտեան Բագրատունւոյ եւ Աղուանից Կիւրիկէի եւ որդւոյ նորին Ոնորիոսի եւ Ներսէսի որ միաբանութեամբ եւ սիրով պատրաստեցան երթալ ի Պարս ի սպաս Մէլք շահ մեծ թագաւորին ...» (որ զահ բարձրանալէ վերջ կը ցանկայ քրիստոնեաներու հետ լաւ յարաբերութիւններ մշակել եւ իր հաւատարիմ պաշտօնեաներէն Արդուլ դեսպան կ'առաքէ «առ ի գնալ ի դուռն մեծ թագաւորին»): Այս՝ տեղի ունեցած պիտի ըլլայ ուրեմն 1063էն յառաջ, մինչ իրականին հաւանօրէն կատարուած ըլլալու է 1089ին: Սակայն կանգ առնենք առաջին թուականէն յառաջ.


Արդ Բիւզանդիոնի զահին վրայ կը գտնենք Միքայէլ Զ. 1056—1057, Իսահակ Ա. 1057—1059, Կոստանդին Ժ. 1059—1067, Ռոմանոս Դ. 1067—1071 եւ Միքայէլ Է. 1071—1078 (եւ յետոյ շատ ուշ՝ Միքայէլ Ը (1261—1281): Հետեւաբար երկու Միքայէլներն ալ չեն կրնար նկատի առնուիլ, զի մէկը 1063էն յառաջ եւ միւսը 1089 էն յառաջ մեռած են: Վրացիներու Բագրատ թագաւորը եւ իր որդին (յոյժ հետաքրքրական է որդիներու յիշատակութիւնը, դուցէ շեշտելու համար թուղթին վաւերականութիւնը եւ նմանապէս յաջորդներու եւ ժառանգներու համամտութիւնը) Գէորգ ժամանակակից են. մէկը՝ կը թագաւորէ 1027—1072 եւ միւսը՝ 1072—1088, նոյն իսկ թերեւ 1089: Յետոյ դրուած են Գագիկ եւ անոր որդին Սմբատ թագաւորները: Բոլորովին սխալ է եթէ հոս ակնարկել ուղղուած ըլլան Գագիկ Ա. (989—1020) եւ Յովհաննէս Սմբատ (1020—1040): Աւելցուցէք նաեւ Գագիկ Բ. Բագրատունի ղժբախտ զահակալը, ուստի հարկ է մտածել որ հոս ակնարկուած Գագիկ թագաւորը Կարուց զահակալն է (1029—1064) որ ունեցած կ'ըլլայ Սմբատ անուն որդի մը: Իսկ Աղուանից Կիւրիկէ թագաւորն է՝ Կիւրիկէ Ա. որ 1048—1089 կ'իշխէ, սակայն թէ սա՝ Ոնորիոս եւ Ներսէս անուն որդիներ ունեցած ըլլայ՝ այդ կը վկայէ այս թուղթը, մինչ անոր որդիներ են Դաւիթ թագաւոր Մածնաբերդի, Աբաս թագաւոր Տաւուշի եւ Ստեփանոս եպիսկոպոս (հմմտ. Մովսէսեան Հ. Ղ. Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, էջ 49—62):

Արդ այս թագաւորները համաձիւ համաշունչ կը ցանկան խորասանի Մելիք Շահ

սուլթանին այցելել եւ անոր բարեկամութիւնը շահիլ (հմմտ. Ս. Անեցի, էջ 118, Վարդան, էջ 1069 «Եւ այնու միաբանութեամբ եկին ի դուռն սրբոյ եւ մեծի վանիցն Հաղբատու ի աղաչել զԱստուած եւ զսուրբ Նշանն տէրունական՝ թերեւ օգնեցէ եւ յաջողեցէ զճանապարհս նոցին մաղթանօք արքեպիսկոպոսին Հաղբատայ եւ խոստացան արեամբ ներկեալ սուրբ Նշանին Քրիստոսի խոստմունս եւ ընծայս մեծամեծս ...» (անդ էջ 261): Յաջողութեամբ կը պսակուի անոնց

անունները եւ անոնց զահակալութեանց թուականները եւ ուրիշ տուեալներ կը ցուցնեն թէ «Սեծամեծ կայսերաց» այս թուղթը անվաւեր է եւ խմբագրուած է Հաղբատի կալուածներն ընդլայնելու եւ զանոնք թշնամիներու դէմ պաշտպանելու համար:

Կիրակոս Գանձակեցի Սարգիսի յաջորդ կը նշանակէ Գէորգ «Եւ յետ Սարգիսի Գէորգ» Պամ. էջ 56), զոր կը մեկնեն՝ Սարգիսի աչքի զարնող, անուն ունեցող յաջորդներէն՝ Գէորգ: Կու տամ այս մեկնութիւնը, զի Սար-



ՀԱՂԲԱՏ—ԳԱՒԻԹԸ

այցը եւ անոնք զոհ սրտով կը վերադառնան Հաղբատ, ուր կը գտնեն «Յայնմ ժամու եւ երկու կաթողիկոսը Հայոց Բարսեղ եւ Աղուանից Ստեփաննոս որք եկեալ էին ի թագուին հանդուցեալ արքեպիսկոպոսին Հաղբատայ ... եւ ընտրեցին անդ քահանայ ոմն ի յառաջնորդութիւն տանն Հաղբատայ, Գագիկ արքայի սուրբ եւ փիլիսոփայ խաղաղ եւ ամենայն առաքինութեամբ զարգարեալ Բարսեղ անուն եւ հրամանաւ երկու թագաւորաց կաթողիկոսքն ձեռնադրեցին զքահանայն ի յառաջնորդութիւն սրբոց վանիցն Հաղբատու» (անդ էջ 262): Ուրեմն Բարսեղ կաթողիկոսը համանուն Բարսեղ քահանայ մը Հաղբատի արքեպիսկոպոս առաջնորդ կը ձեռնադրէ, մինչ Կիւրիկէի դրան երէցը Սարգիս է, որ այդ պաշտօնին կը կոչուի եւ ոչ թէ Գագիկի սուրբ քահանան Բարսեղ:

Այս վերջին պարագան, թագաւորներու

գիտի մահէն յետոյ (հաւանօրէն հանդիպած 1089 էն քանի մը տարի վերջ) մինչեւ Գէորգ երկարածիդ ժամանակամիջոց կայ, ինչպէս Յովհ. Ղրիմեցի ալ ուշադիր եղած է, երբ կը գրէ «Կիրակոս ցուցանէ զսա (Գէորգ) լինել յաջորդ Սարգիսի յասելն եւ յետ Սարգիսի եղեւ եպիսկոպոս Գէորգ: Բայց յայտ է թէ ի մէջ սորա եւ նորա է միջոց երկարածիդ» (Թ. 239 էջ 108): Եւ ինքը Յովհ. Ղրիմեցի կը գնէ յաջորդ Սարգիսի Յովհաննէս Ա. (անդ. էջ 107), որուն համար կ'արտայայտուի «Երեւի յաջորդեալ զառաջնորդութիւն ուխտիս զկնի Սարգիսի, բայց թէ ե՞րբ, անյայտ է. յիշատակի միայն ի տապանադրի իւրում առ եկեղեցեան Տիրամօր այսպէս՝ Այս է հանդիստ Տեառն Յովհաննիս: Զսա համարիմ այն յորոյ աւուրս Դաւիթ արքայ Վրաց ընծայեաց ուխտիս դեօղ մի եւ այդիւ ըստ արձանագրին, զոր եղաք ի Գլ. Ե. յորում արձանագրի անուն

* «Եւ ՇԼԵ թուականս (1086) եւ Տէր Սարգիսի զայս եւ արարի ուխտիս Հաղբատայ շինեցի զՎրաստանից եւ զգրախոս զանազան մարգարեալք ի փառս սրբոյ Նշանին եւ ի վայելումս տանն Հաղբատայ...» (Թ. 239, էջ 157, Արարատ 1887, էջ 219:

առաջնորդի գլխավորն եղծեալ զօրով, այսչափ ինչ գրեւած զնմանէ երեւի ամբողջ Գրեցաւ զերս յարեալսկոպոսութեանն առաջնորդի Հաղբատայ, որ է եղբայր Գրեգորիի և Թուին Շէ... այսչափ: Եւ ըստ այսմ համարի սա ինքն Յովհաննէս յաջորդ Սարգսի եւ միանգամայն նախորդ Գեորգայ» (անդ էջ 107—108): Հարկ է զեւել որ վերոյիշեալ դամբանադերը կրնայ Յովհաննէս եպիսկոպոսի մը ըլլալ որ Հաղբատի առաջնորդ է եղած եւ կամ նոյն իսկ եթէ առաջնորդի մը՝ կրնայ նաեւ յետին շրջանի մը առաջնորդի մը ալ ըլլալ եւ դարձեալ է կարելի հաւատարմ հաստատել որ երկրորդ արձանագրութեան մէջ եղծուած անունը՝ Յովհաննէս ըլլայ, զի Գրեգոր կրնայ ուրիշ անունով եղբայր մը եւս ունեցած ըլլալ:

Յովհաննէսով կարելի է Սարգիսէ մինչեւ Գեորգ երկարող ժամանակը լեցնել: «Արարատի» մէջ (հմտ. վերը) ինչպէս յիշեցինք կը տրուի Յովսէփ արքեպիսկոպոսի մը անունը Սարգիսէ վերջ, բայց է նշանակուած թէ ինչ հիման վրայ: Նաեւ այժմէն իսկ ըսենք որ՝ Յովհ. Սարգիսէ եւ Դաւիթ Քոբայրեցի Հաղբատի առաջնորդ չեն եղած: Այո՛ եղած են աշխուռ դէմքեր, սակայն այդ չ'ենթադրեր որ առաջնորդ ալ եղած ըլլան: Յովհաննէս Սարգիսէ մասին արդէն այլուր պիտի խօսիմ:

Անցնինք արդ Գեորգի, որուն համար կ'ըսէ Յովհաննէս Ղրիմեցին «Երեւելին իմաստութեամբ եւ սրբութեամբ, նստի առաջնորդ Հաղբատայ, բայց թէ երբ՝ անյայտ է յարձանագրաց, նաեւ ի պատմութեանց...: Սոյն այս Գեորգ առաջնորդ էր ժամանակակից Շնորհաւոյն Ներսէսի, ընդ որում ունելով ընտանութիւն մեծ, թղթակցութիւնք յորով ի միջի առ միմեանս եղեն շուրջ զթուականաւ Ոժե եւ դամաւ Փրկչին 1166: Յիշատակի ի պատմագիրս արարեալ սորին Գեորգեայ եւ զմեկնութիւն Եսայեայ մարգարէութեան ի Թուին Որի յամի Տեառն 1173, ըստ որոյ յայտնի ամբ առաջնորդութեան նորա հաշուին իբր Եօթն, այլ սկիզբն եւ վախճանն առաջնորդութեան անյայտ» (անդ էջ 108—109): Ներսէս Շնորհաւորի հետ աւելի կանուխ թղթակցութեան մէջ եղած է (հմտ. Կիր. էջ 56, Տեառն Ներսէսի Շնորհաւոր թուղթք, Վենետիկ 1873 էջ 273—277 եւ Յովսէփեան Նիւթեր եւ Ուսումնա-

սիրութիւններ, Պրակ Ա. էջ 66): Անոր դամբանագիրը ըստ պարզ է «Այս է հանգիստ Տեառն Գեորգայ (եթէ ուրիշ Գեորգ մը է ահարկուածը):

Գեորգի⁵ յաջորդութեան կը կոչուի Բարսեղ, որ «Գեղեցիկ է տեսեամբ» եւ Թամար թագուհին «Մեծապէս պատուեաց զնա վասն վայելչութեան գեղոյ նորա եւ դարձեալ, զի եղբարք նորա գործակալք էին տանն արքունի» (Կիր. էջ 56): Ուրանանց տոհմէն է եւ այս ինտամութեամբ կապուած է Կիւրիկեան տան հետ: Իր օրով «Աւարտեցաւ Մարիամ Բագրատունու իւր նախնեաց եւ աղագահաների գերեզմանների վերայ կանդնած աղօթատունը ՈՒԴ — 1185 — Թուին եւ այն երեք առաջնակարգ գեղեցկութեամբ խաչերը, որ հաստատուած են այդ շէնքի արեւելեան պատին» (Յովսէփեան, անդ էջ 66):

Հետեւեալ յիշատակագրութեան մէջ Բարսեղի մասին կան կարեւոր տեղեկութիւնները՝

...Յոյժ ըզձիւ եւ յաւէտ տարիմամբ անձկոյ ի վաղուց ժամանակաց տոհմեալ այսմ աստուածահարչ վարդապետութեան սիրով սրբոյն Բարսղի, սուրբ ուխտս Հաղբատայ ... ոչ գրեալ եւ ոչ ստացեալ ումեք զայս գիրս եւ ամենափարթամ գանձարանս այսմ ուխտի ոչ ունէր զսա, որոյ թերութիւն գիրն ինքզէր լրումն, որ պահելու համարուանս իւրոյ Տեառն Բարսղի արհիպիսկոպոսի աստուածաբանի այսմ սրբաբանիս ... որ եկեալ ի գաւառէն Սաշենոյ ... յաջորդեալ զաթոռ Տեառն Գեորգեայ ամենայնիւ առաւելեալ քան զառաջինն ի փոյթ շինութեան սրբոյ ուխտիս: Քանզի թէպէտ եւ էր ի հարց եւ ի հաւուց յազատաց եւ եւս առաւել գոյր արժանաւոր մեծի գովութեան վասն հոգւոյ անարատութեան եւ վարուց մաքրութեան, որով եւ կոչեցաւ իսկ յայս յաթոռ ըստ վկայելոյ թագաւորիս եւ համայն ազատաց, այլ եւ ճշմարտական դասու կրօնաւորաց եւ յամենեցունց եղեւ պատուեալ

⁵ Գեորգ կը հետաքրքրուի Ս. Սարգիսի վկայարանութեամբ, որուն վերջաւորութեան կայ՝ Թարգմանեցաւ ճառս յԱսորոց ի լեզուս մեր... ի թուականութեանս Հայոց ՈՒ — 1158 — ի խնդրոյ Գեորգայ եպիսկոպոսի յառաջնորդի սուրբ ուխտին Հաղբատայ... Դարձեալ կայ՝ Թուղթ առ ի Ներսիսէ եղբարէ Տեառն Գրեգորիսի Հայոց կաթողիկոսի առաջնորդի սուրբ ուխտին Հաղբատայ, յազաւ հետազոտելոյ առ ի ստուգութիւն զպատմութիւն երանելոյ նահատակին սրբոյն Սարգիսի զաւրաւարին մեծի (Յովսէփեան, Յիշատ. Ձեռ. Ա. էջ 371—372):

ըստ արժանւոյն: Եւս առաւել ի մեծ Ամիր սպասարարէն յիւանէէ եւ ի գուգակցէ նորին ի բարեսէր թագուհւոյն Ռուսուգանայ... որ ցուցանէր զգութ հարց իւրոց եւ նորոգէր զիւրոյ նախնեացն սէր առ ամենեւին առ հեռաւոր եւ մերձաւոր ուխտս սուրբա: Քանզի ամենայն տեղի, որ ի նախնեացն սորա շինեալ էին, եւ նուազեալ յետոյ, ի սորա աւուրս պայծառանային եւ նորոգէին վերստին, եթէ ի մերում գաւառիս եւ եթէ ... Քանզի յամենայն տեղի շինութեան ... Իւանէի առն սորա հասանէր եւ սա ջանայր զի զիւր նախնեացն շինեալ եկեղեցիսն պայծառացուցէ, որ եւ կամեցաւ զգերեզմանս առաջնոց թագաւորացն որ ի սուրբ ուխտիս առաւել պատուել եւ պայծառացուցանել, վասն որոյ եւ զսուրբ ուխտս ի ձեռն Տեառն Բարսղի եւ սա ելից ընդ այլ թերութեանցս բազմաց եւ զայսմ գրոց պահապութիւն եւ հաստատեաց ի սուրբ տեղւոյս ...

Գրեցաւ գիրքս ի թուականիս հայոց նորումս 20—89 (1172) ... Գրեցաւ ձեռամբ Սարգիսի նուաստ գրչի եւ ախմարի եւ յետին աշակերտի եկեղեցւոյ սրբոյ ուխտիս ... Կաղմեցաւ ձեռամբ Յովսէփայ վարդապետի եւ եղաւ յարկեղ սրբոյ Նշանիս⁶... (Հայաստանում, Բ. էջ 382 եւ Չարբանէլեան, Մատենադարան էջ 339 եւ Յովսէփեան, Յիշատ. Ձեռ. Ա. էջ 407 եւ Սարգիսեան, Մայր ցուց. Բ. էջ 1267—1268):

Այս շրջաններուն տեղի կ'ունենան Գրեգոր Տղայի եւ Ներսէս Լամբրոնացւոյ թղթակցութիւնները: Այս է՝ Գրեգոր Տղայ Հաղբատացիներու եւ Սանահինցիներու յորդոր կը կարգայ եկեղեցական միութեան, իսկ Ներսէս Տարսնի եպիսկոպոսը անոնց, մանաւանդ Գրեգոր Տուտնորդւոյն մասին ան-

⁶ Յիշատակագրութեան մը մէջ կայ՝ «Գրեցաւ աստուածային տառս ձեռամբ նուաստ գրչի Գրեգորոյ ի մայրաքաղաքիս Հաղբատայ յառաջնորդութեան Տեառն Բարսղի, զոր սկիզբն արարաւ զարարածոց մեկնութիւն, զոր ոմն ի վարդապետաց եկեղեցւոյ համառուեալ էր...» (Չարբանէլեան, Մատենադարան, էջ 344): — Ժամատան գրան ճակատին վրայ արձանագրուած է՝ «Ի ՈՒԼ Թուին (1189) յառաջնորդութեան Տեառն Բարսղի հարեղարար իմոյ եւ Դաւիթ օրդի Արանին... շինեցի զխորանս եւ գեղեցիկս ի վերայ հանգստարանի հար իմոյ եւ քիւր Բուրգուխանայ, արդ աղաչեմ սուրբ եղբայրութիւնդ որ զաղուհացիցն զարարեալ եւ գիւրեարկէն... իմ մարն վանէի զստեր Կիւրիկէի թագաւորի եւ իմ քիւրն Բուրգուխանայ եւ իմ հարն Արանին եւ յետիս ինձ եւ իմ քիւրն առնեն եւ ով խափանէ մեր խղճս պարտական է առաջի Աստուծոյ» (Թ. 239, էջ 56, Արարատ 1886, էջ 523):

նպաստ կ'արտայայտուի (հմտ. Գրեգորի Կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի Վենետիկ 1865 էջ 5, 53 եւ 207):

Յովհ. Ղրիմեցւոյ համաձայն Բարսեղ մասնակցած է Հռոմիլայի ժողովին — 1179ին եւ «Ի Թուղթն ժողովոյն առ Յոյնս ստորագրեաց եւ ինքն զանուն իւր այսպէս՝ Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Վրաց Տփլիսեաց» (Թ. 239 էջ 109):

Նոյն հեղինակը Բարսեղի յաջորդ կը նշանակէ Յովհաննէս Ա. (հմտ. անդ էջ 109) բայց ըստ իրեն Յովհաննէս Բ. (հմտ. վերը), մինչ Կիրակոս Գանձակեցին Գրիգորի Ռիմ, «Որ է աղագական Չաքարիայի եւ Իւանէի, այս է Որդի Տուտեայ կամ Տուտնորդի Գրեգոր» (հմտ. նաեւ Օրբէլեան, Պատմ. էջ 343): Երկու պատմագիրներն իրարու հետ հաշտեցնելը ըստ զիւրին է. Բարսեղի անմիջական յաջորդը կ'ըլլայ Յովհաննէս Սաշենցի, բայց կարճ ժամանակէն կը թողու իր աթոռը աննպաստ պարագաներու պատճառով եւ կը քաշուի Սաշենք եւ Գրեգոր անոր գահին վրայ կը բազմի:

Տուտն Որդին բուն բնաւորութիւն ունի, թէեւ կարող անձ: Եւ եթէ գիտնար խոհեմօրէն վարուել եւ զուսպ ըլլալ աւելի արդիւնաւոր գործունեութիւն պիտի ունենար եւ զնահատուէր:

Չաքարիա Սպասար Լօսիի մէջ եկեղեցական ժողով մը կը գումարէ եւ անոր անդամներէն է նմանապէս «Գրեգորիս եպ. Հաղբատայ (Կիր. էջ 84): Ժողովը փոթորկալից կ'ըլլայ. «Ոմանք հաւանեցան եւ կէսքն ոչ եւ այսպէս անմիաբան լեալք քակտեցան ի միմեանց»: Չաքարիա բունութեան կը գիմէ եւ կ'ուզէ որ՝ Հաղբատի մէջ ալ Ս. Կոյսի փոխման եւ Ս. Սաշի տօները պատկերը ինչ օր բերէ այդ օրը տօնելն եւ ոչ թէ Կիրակի: Մինաս եպիսկոպոսը Հաղբատ կ'երթայ այդ որոշումը ընդունելի եւ պարտաւորիչ ընելու: Սակայն Գրեգորիս որ համակարծիք չէ՝ անոր ճամբան կտրել կ'ուզէ՝ մարդ զրկելով եւ ասոնք «Հարին զնա բրօք եւ զպաշտօնեայս նորա եւ վէրս ի վերայ եղեալ թողին կիսամահ եւ զժողովն որք էին ընդ նմա բեռնակիրք զահաւիթ արարեալ սատակեցին» (Կիր. էջ 85): Կիսամահ եպիսկոպոսը կը տարուի

⁷ Միւլթար Գօշ կ'իշէ «...Յեպիսկոպոսութեան Տեառն Բարսղի հոգաւոր ուխտիս Հաղբատայ» (Յովսէփեան, Յիշատ. Ձեռ. Ա., էջ 522):

Ձաքարիայի մօտ եւ անիկա «Բարկացեալ յոյժի վերայ եպիսկոպոսին, այս է՝ Գրիգորի, հրամայեաց ըմբռնել զնա, մահուհաւ սպառնացեալ ի վերայ նորա» (անդ էջ 85): Տուտէորդի փախուստի կը դիմէ. նախ՝ Գետիկ վանքը եւ ապա՝ Կեչառուս կ'ապաւինի, բայց կը բռնուի հոն եւ Ձաքարիա «Եդ զնա ի բանդի եւ զՅովհաննէս կացոյց եպիսկոպոս Հաղբատայ փոխանակ նորա, որ այն որ յառաջն եթող զաթոռն եւ զնաց ի թաշէն»⁸ (անդ էջ 85):

Յովհաննէս Ա. «այր հեզ եւ առաքինի, ազգական իշխանաց իմացնոյ» (Կիր. էջ 56) այլ եւս անխուղ ու ապահով կը բազմի Հաղբատի առաջնորդական եւ հայրապետական աթոռին վրայ եւ կը սկսի ստուգել շինարարական գնահատելի գործունէութեան: «Բազում գործս յիշատակի արժանիս գործեաց ի Հաղբատ, ընդ որս եւ զհաշակաւոր գաւիթս շինեաց եկեղեցոյն որ հիացուցանէ զտեսողսն» (Կիր. էջ 85): Յովսէփեան կը գրէ «Արդարեւ Հաղբատի այս մեծ եւ հոյակապ գաւիթը հայ ճարտարապետութեան ամենափառաւոր կոթողներէն մէկն է, իսկ գաւիթներն ճարտարապետութեան մէջ առաջինը» (Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ Ա. էջ 66, հմմտ. Արարատ 1887, էջ 264):

«Ի ճակատ դրան արեւմտեան մեծ գաւթի կամ ժամատան աւագ տաճարին» կայ սակարեւոր արձանագրութիւնը.

«Կամաւք եւ ողորմութեամբն Աստուծոյ Հաւր հզաւրի եւ Միաճնի Բանին եւ ամենասուրբ Հոգոյն այս գիր արձանագրեցաւ կտակ մշտնջենաւոր յամս աւժելոյ Աստուծոյ թաղաւորան թաղաւորին Գէորգէ որդոյ մեծ Աստուծոյ ի ձեռն Բ. հարազատացս Ձաքարէի եւ Իւանէի զանհաւան զգեական մեր գրերթ ամբողջս: Արդ ես մանդատոր թախուցէս բարեպաշտի իշխանաց իշխանին Սարգսի՝ ետու ի սուրբ ուխտս Հաղբատայ գիւմ հայրենի գեղերն որ յԱշոցք, զՀալալաշէն եւ ...

⁸ Ներսէս Լամբրոնացիի Յովհաննէս Մեկնութեան ետեւ հեղինակին յիշատակարանէն վերջ կայ «Ի Յովհաննէս աստուածարան աւետարանչիս: Սակաւ որոյ մերոյն սրբազան վարդապետին Դաւթայ խնդրեալ զսա յորժամ գնաց առ տէր Գրիգոր կաթողիկոսն Հայոց: Եւ զանեան աւրինակ ի նմանէ տայ պարգեւ տեսան Գրիգորի Հաղբատայ առաջնորդին Ձաքարէանէն Հ. Գ. Մատենադարան, էջ 303:

եւ զի այս գեղերս հեռի էին ի Հաղբատայ, փոխեցի եւ ետու հայրենիք Դաւթի որդոյ Շոթրոկայ եւ առի Բ. գեղին փոխան զՀաղբատ հայրենիք եւ ընծայ սուրբ Նշանին Հաղբատայ ամենայն սահմանաւք ոնց բնական եղեալ է(ր) հողով եւ ջրով, խոտամարգերով. մայրիւք եւ ջաղացովք գոմամարգերով, լերամբ եւ դաշտով վասն երկար կենդանութեան թաղաւորին եւ արեւշատութեան որդոյ իմոյ Շահնշահի եւ եղբար իմոյ Իւանէի եւ որդոյ իւրոյ Աւագին եւ յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց: Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ, ի պատրոնաց, ի ձեռնաւորաց, ի գեւղաւագաց: Եւ եղի լուծ ի վերայ սոցա զայս որ ի մեծ եկեղեցին զաւագ խորանին պատարագն անխափան յիւմ Ձաքարիայի անուն մատուցանեն յայսմ հետէ, որ թիւ Հայոցս է ՈՅԹ մինչ ի գալուստն Քրիստոսի: Եթէ հակառակի ոք եւ դմեր յիշատակս խափանել ջանայ յիմոց կամ յաւտարաց. մեծ կամ փոքր, ի վրաց կամ ի Հայոց, ի Լօռու տերանց, յեպիսկոպոսաց, ի քահանայից եւ յաշխարհականաց արանց կամ Հաղբատս յետ առնու եւ զիւմ պատարագն խափանէ նզովի յամենակալ բերանէն Աստուծոյ եւ աւանդող հոգւոյ նորա սատանայ լիցի (Թ. 239, էջ 37—38: Արարատ 1886, էջ 525 եւ Brosset, 6—7, Ջալալեան, (Ա.) էջ 58—59):

Յովհաննէսի առաջնորդութեան ընթացքին Հաղբատի մէջ կը ծաղկի զբնագրութիւնը. այսպէս՝

1195ին Հաղբատի մէջ կը գրուի Եփրեմի Համարարբառի մեկնութիւնը. «Որպէս աւանդ հայրենի յաղագս որդւոց յառաջապահեաւ արարեալ զանձեալ եւ եղեալ սուրբ եւ արդիւնականաւոր ոմն Անանիա ժառանգաւորաց տանս Հաղբատայ եւ ի լուսաւորութիւն հանուրց աշխարհաց ... Արդ ես իմաշատուր, այր ոմն անտոհմիկ թափառական եւ աղքատ սուտանուն արեղայ, զիմեալ ի հրահանգս վարժից առ ոտս իմաստուն եւ սրբադնեալ վարդապետաց, գտեալ ապա զայս աստուածատուր գանձարանս առ մեծարդի եւ իմաստուն վարդապետի իմոյ Դաւթի եւ խնդրեալ շարագրեցի անարուեստ եւ անվարժ գրով ... Բայց (գրեցաւ) գիրքս այս ի գաւառիս Չորոյգետոյ ի վանքս Հաղբատ, ... յեպիսկոպոսութեան Տեառն Յովհաննիսի ... ի վարդապետութեան Դաւթի, Պետրոսի,

Իգնատիոսի, եւ զինի մահուան վարդան վարդապետի, յորում ամի գերեալ ի Վրաց գաւառն Կարնոյ եւ ի վանորայն յաւերումն յառ եւ ի գերութիւն մատնեցան: Յայսմ ժամանակի ես իմաշատուրս տկարացեալ եւ խելայեղեալ գրեցի զգիրս այս խոշոր եւ անյարմար յանպիտան նիւթի ... զարդիւնաւատար եւ ամենաերջանիկ վարդապետն ... զհովիւն բանաւոր ոչխարաց ... զհանգուցեալն (ի Քրիստոս եւ զԳրիգոր վարդապետ, նորին հարազատ եւ զիմաշատուր որբացեալ աշակերտ յիշեալիք յաղաւթս) Ալիշան, Հայապատում, էջ 383, Մատենադրութիւն Եփրեմի, Ա. Վենետիկ 1836, էջ 7, հմմտ. Յովսէփեան, Յիշատակարանք, Ա. էջ 589—592):

Յովսէփեան կը կարծէ թէ նաեւ Եսայիի եւ Պօղոսի ԺԴ. թուղթերու արտագրութիւններն ալ ԺԲ. դարուն Հաղբատի մէջ գրուած ըլլան (հմմտ. Հաղբատի դպրոցը):

Հաղբատի գլուխ գործոց Աւետարանին — որ Գետաշէնի Աւետարան կը կոչուի, զի հոն գտնուած է — Յիշատակագրութեան կարեւոր մասերն են ... «Որում եւ այսպիսոյ յորժամ պատիկ բարեաց բաղձացող եղեալ իմ ամենանուստի եւ տրուպ սպասաւորի տան Աստուծոյ Սահակ կրտսեալորի եւ յետին քահանայի, որ էի աշակերտ սուրբ ուխտիս Հաղբատ, ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնուոյ, սնեալ ի սրբաբան ուխտիս ի Հաղբատ, ստացայ զսուրբ Աւետարանս իմովք արգեամբք առ ի յիշատակ ապագայից ինձ նուաստից Սահակայ եւ ծնողացն իմոց Ռովմանոսի եւ Կատային եւ երկուց հարազատաց եղբարցն իմոց Իպատոսին եւ Առաքելին եւ իւրեանցն զաւակաց եւ քերցն իմոց եւ զաւակացն նոցուն եւ ազգայնոց ամենից կենդանեաց եւ մեռելոց: Եւ ետու զծագրել զսա եւ կաղմել ներքոյ եւ արտաքոյ յաւրիւնուածով ըստ իմում կարի եւ կատարեալ սիրով: ... Յորժամ առնուք զսա ի ձեռն ձեր զիս զՍահակ ստացող սորա եւ զվերոգրեալ ծնողսն իմ եւ զեղբարսն եւ զՍարգիս հոգեւոր ծնողն իմ զԹակովբոսն եւ զՎարդն: Որպէս զի ձերոյն սուրբ աղաւթիւք արժանացուք հանդիպել ի զէպ ժամանակի հանդերձելոցն բարեաց պատրաստելոցն ի Քրիստոս: ... Եւ արդ զրեցաւ սա եւ ծաղկեալ կաղմեցաւ յամի յորում էր թիւ համարոյ թուականութեանս

Հայոց հարիւրոց վեցից եւ նոյնքանեաց տասանց, իսկ նորոյ շրջանի միոյ հարիւրոյ քսան եւ ութեակ թուով, ի սուրբ ուխտս Հաղբատայ զծագրեցաւ ձեռամբ Յակոբայ յառաջնորդութեան Տեառն Յովհաննիսի սրբաւորի, ի թագաւորութեան Հայոց արեւմտային կողման Լեւոնի քրիստոսասէր թագաւորի եւ ի սպարապետութեան Ձաքարիայ Շահնշահի, յորոց յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց Աստուած յաղթութիւն ի բաղում տեղիս, զորմէ այլք պատմեսցեն զայլ ինչ եւ մեզ վասն զի խնդիր է առ սրբութիւնդ ձեր մատուցանել մաղթանս հոգեհեծ պաղատանաւք, ով լուսերամ բնակիչք սրբոյ ուխտիդ Արջուառճի, առ որ զոյս հաւատոյ մեր եղեալ զբովանդակ գոյք ծնողաց մերոց եւ եղբարց ծախեցաք եւ շինեցաք զաստուածբնակ եկեղեցիքս եւ աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէջ ի վանս Արջուառճի, որպէս զի սուրբ եկեղեցեալս եւ սուրբ Աւետարանաւս մեր եւ ծնաւորսն մեր եւ եղբարք եւ ազգականք գտցուք ողորմութիւն ... Հրամանաւ հաւր Միաթարայ կաղմեցաւ ի վանքս Հոռոմոսի, որոյ ողորմեսցի Քրիստոս Աստուած: Ձկագմող սորին զԱրբաշամ եւ զնկարիչս սորին զՄարգարէն եւ զողորմութիւն խնդրող զՅովհաննէս յիշեալիք յաղաւթս» (Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի, Պր. Ա. էջ 42, հմմտ. նոյնը, Յիշատակարանք, Ա. էջ 749—750):

Յովհաննէսի առաջնորդութիւնը երկարատեւ կ'ըլլայ: Կը յիշուի դեռ 1218ին⁹. «Ի թուականութեան Հայոց ՈԿԵ եւ ի հայրապետութեան սուրբ ուխտիս Հաղբատայ Տեառն Յովհաննէսի հեղի եւ առաքինւոյ եւ ի սպարապետութեանս Հայոց եւ Վրաց Իւանէի եւ մանկանս Շահնշահի, ես նուաստս Ստեփանոս հանդերձ եղբարս իմով Սարգսիւ յետին աշակերտ հոգեւոր վարդապետին Իգնատիոսի, որոյ յիշատակն աւրհնութեամբ (եղիցի) սնեալ եւ վարժեալ առ ոտս սրբոյ Նշանիս Հաղբատայ: Արդ ցանկացաւ եղեալ իմ այս Տաւնամակաց լցեալ հոգեւոր գանձիւք եւ յերկնային մանանային, զոր շարայ-

⁹ Կարեւոր արձանագրութիւն մը կայ իր օրերէն 1211ին (հմմտ. Արարատ 1887, էջ 108): Եւ ուրիշ աւելի կարեւոր մը 1221ին (անդ 1886, էջ 521—522):

արեալ սրբոց վարդապետաց» (Յովսէփեան, Յիշատ. Զեռ. էջ 795):

Յովհ. Ղրիմեցի կը գրէ «Ամբ առաջնորթեան սորին Յովհաննու յայս նուազ (այս է երկրորդ անգամ) ի նախագրեալ ՈՅԵ թուականէ հաշուեալ մինչեւ յայս ՈՀ (1221) թուական երեւին առ առաւելն հնգետասան, բայց թէ որչափ եկաց աւելի քան զհինգ ամ, զի արձանագիր ինչ ի Սանահին ընդ ՈՀԶ թուականաւ (1227) որ թուի լինել յաջորդի նորին միւս Յովհաննու (թ. 239 էջ 113):

Ուստի եւ 1227ին Յովհաննէս Ա. ի յաջորդ է արդէն Յովհաննէս Բ. որ անոր եղբորորդին է եւ քեռորդին Ջաքարէ եւ Իւանէ իշխաններու: Կիրակոս անոր գործունէութիւնը կը նկարագրէ «Սա շինեաց բերդ մի ամբողջն պարսպօք ի մէջ Հաղբատայ եւ Սանահինի, վասն որոյ գծաւորութիւն ընդ երկուս մեծամեծ վանորայս եղեւ, որպէս թէ ի հողոյ Սանահինի իցէ եւ վրէժխնդիր եղեւ իշխանն Շահնշահ որդին Ջաքարէի Սանահինի, զի հայր նորա անդ թաղեալ էր եւ իւրեանց սեփական համարէին, զի Հաղբատ ի վրաց թաղաւորին հաշուին էր յայնմ ժամանակին» (Պամ. էջ 56): Յովհաննէսի այս ձեռնարկը մեծ գործ էր եւ շատ դժուար կարօտ, ինչպէս եւ շատ յոգնութիւն կը պատճառէ իրեն, սակայն հարկաւոր էր այդ վանքին ապահովութեան եւ պաշտպանութեան համար: Թէեւ կ'ունենայ հակառակորդներ, բայց որովհետեւ Յովհաննէս կորովի է եւ աննկուն եւ դարձեալ հրամանով ժամանակի մեծ իշխաններուն ձեռնարկած էր գործին եւ անոնց հետ արեւելի կապ եւս ունէր, ոչ ոք կը համարձակի շինութեան արդեւ ըլլալ: Նոյն իսկ Շահնշահ՝ որ համաժողով էր եւ դժգոհ էր, բայց խոհեմական կը համարի անոր կենդանութեանը շատ անհաճոյ քայլ չառնելու (հմտ. Կիր. էջ 56): Արձանագրութիւն մը կ'աւանդէ «Ի թուին Հայոց ՈՀԲ (1233) կամաւն Աստուծոյ եւ Տէր Յովհաննէս առաջնորդ Հաղբատայ քուրորդի մեծ պարօնացն Ջաքարէի եւ Իւանէի ի ժամանակի որ եհաս սասանունն աշխարհիս մերոյ ի խորագմանցն, ոչ գոյ տեղի ապաստանի սուրբ Նշանիս ... հրամանաւ քեռորդոյն իմոյ (քեռուոյ որդւոյն) եւ որդւոյն իւրոյ Աւագին եւ Շահնշահի որդոյ Ջաքարէի շինեցի դամբոցս եւ գեղեղեցիս Հաղբատայ սուրբ Նշանիս

նիս բազմաւ աշխատութեամբ: Արդ եթէ ոք զսա ի Հաղբատայ հանէ, եթէ մեծաց թէ ի փոքունց, զինչ եւ իցէ պատճառաւ, մարդն այն նդովեալ եղիցի ի մահ եւ ի կեանս ... մինչեւ ի դալուստն Քրիստոսի, ինչ նդովեկայ ի վերայ նորա եղիցի, երեւեալ եւ տատանեալ եղիցի որպէս Կայեն եւ բաժան (բաժին) զՅուդային առցէ եւ աւանդիչ հոգւոյն նորա սատանայ իցէ ... (լիցից) ... կամ նախանձու կամ ծուլութեամբ կամ կաշառաւ զսա ի Հաղբատայ հանէ, զվերոյդրեալ նդովն առցէ: Եւ որք հաստատեն աւրանին յԱստուծոյ: Եւ պարտին ինձ Տէր Յովհաննէսիս զԱստուծածանին տաւնի Գաւրն ի սմա զպատարագն ինձ (վասն ի մատուցանել)» (թ. 239 էջ 114—115, Արարատ 1887 էջ 220—221, Ջալալեան, էջ 80, Brosset էջ 44):

Հաղբատի Դրսի վանքն է Կայան բերդը՝ օժտուած եկեղեցիով եւ ամուր պարիսպներով: Բերդին շինութենէն քանի մը տարի յետոյ կը մեռնի Յովհաննէս եւ անոր տապանաքարին վրայ կը գրուի «Ջաքարէի եւ Իւանէի քեռորդի Յովհաննէս եպիսկոպոս տեղոյ» (թ. 239, էջ 114—116 եւ Brosset, էջ 45):

Անոր մահէն վերջ «Քակեցին եւ զպարիսպն բերդին հրամանաւ Թաթարին» (Կիր. Պամ. էջ 56) եւ անոր կը յաջորդէ Կիրակոսի համաձայն «ՅՈՎՀԱՆՆՍ Գ, որդի Աղսարթանայ Մաճնարեղէ Բագրատունեացն, ամս երկուս որ չեւ էր ձեռնադրեալ եպիսկոպոս վասն չփոթման ժամանակին, որ յետոյ ձեռնադրեցաւ ի կաթողիկոսն Աղուանից Ներսէսէ կողմանցն Մաճնարեղին» (Պամ. էջ 56—57): Եւ ապա անոր կը յաջորդէ Համագասպ «ի քաղաքէն Անուոյ» (անդ էջ 57): Իսկ Յովհաննէս Ղրիմեցիի համաձայն Յովհաննէս Բ. ի յաջորդ կ'ըլլայ Համագասպ եւ ասոր՝ Յովհաննէս եւ դարձեալ՝ Համագասպ (թ. 239 էջ 116):

Կիրակոս Գանձակեցիի Պատմութեան շատ ծանօթ Յովհաննէս Ղրիմեցի Համագասպի մասին կը գրէ «Համագասպ Անեցի իշխանագն յաջորդէ յաթոռն անմիջապէս զկնի Յովհաննու Երրորդի (ըստ իրեն, բայց մեր կարծիքին համեմատ Երկրորդի): Ջոս Կիրակոս զնէ յաջորդեալ զկնի Յովհաննու Չորրորդի (սակայն կը համարիմ թէ զնելու է Երրորդի) Բագրատունոյ, բայց ըստ սրբու յայտնի

երեւի յարձանագրաց ոչ միայն եղեւ նա յաջորդ նորա այլ եւ նախորդ նորա, զի ի թուականէ Հայոց ՈՂԱ մինչեւ յթուականն ՈՂԸ ի բազում արձանագիրս պարզապէս յիշատակի առաջնորդութիւն նորա» (թ. 239 էջ 116): Եւ կը պատճառաբանէ որ այս թուականներուն պէտք է որ Համագասպ առաջնորդ ըլլայ, քանի որ կը յիշուի թէ Կոստանդին կաթողիկոսի թուղթին — զոր վարդան Արեւելցին կը բերէ — համաժողով կ'ըլլայ եւ թէ Դաւիթ Մուրեցեցիին սաստի թուղթ կը գրէ (անդ էջ 116—117 եւ Կիր. Պամ. էջ 174 եւ 184): Յովհաննէս Ղրիմեցին ինքն եւս անտեղեակ է թէ ի՞նչ պատճառով Համագասպ առաջնորդութենէ կը հեռանայ եւ կամ կը հեռացուի, եւ անոր կը յաջորդէ Յովհաննէս Գ (անդ էջ 117): Այս վերջինին յաջորդութիւնը արդ մեզ չի հետաքրքրեր, զի կարճ ժամանակ պաշտօնավարած է եւ կարեւոր ձեռնարկ մը չունի, ուստի անցնինք Համագասպի գործունէութեան: «Սա շինեաց եկեղեցի ի տեղին հրաշալի եւ զանդակատուն եւ ժամատուն մեծ եւ սքանչելի» (Կիր. Պամ. էջ 114—116): «Ի թուին ՈՂԳ (1245) շինեցաւ գեղեցկազարդ տաճարս զարթուցանող փառաբանչաց Տեառն եօթն խորանաւ ի Տէր Համագասպայ, որում որորմեացի Քրիստոս եւ տացէ ի լուսեղէն յարկաց իւրոց ոգւոյ նորա եւ Յովհաննէսի քուրորդոյ իւրոյ եւ այլ աշխատողացն, զի բազում ջանիւ շինեաց զսա ի դառն ժամանակիս Թաթարաց» (Ջալալեան, ծամբ. Ա. էջ 76 Արարատ 1887 էջ 72 եւն): «Սա է երկրորդ մեծ եւ գեղարուեստասէր անձն Հաղբատի առաջնորդներէ մէջ» (Յովսէփեան, Նիւթեր ... էջ 67): Անոր շինութիւնները մէկական կոթողներ են անխոնջ եւ գիտակից առաջնորդութեան: Գիտցեր է զժողովրդութիւններու կուրծք տալ եւ հետամուտ եղած է լաւ շինելու եւ լաւադոյնը ընելու: Անունը միշտ պիտի յիշուի իր կերտած «Համագասպ» ով: Սիրած է նմանապէս գիտութիւնը եւ խնդրած վարդան Արեւելցի վարդապետէն Ս. Գրքի մատենաներու մեկնութիւններ (հմտ. Հաղբատի Դպրոցը եւ Արարատ 1888, էջ 580):

Համագասպի առաջնորդութեան չըջանին կը գրուի հետեւեալը, որ իր բովանդակութեամբ հետաքրքրական է եւ կարեւոր.

Փառք ... Յընտրեալունից մերոց եղբարց մաւրս լուսոյ բազմազան զաւակաց նոր

Սիրնի կաթողիկէիս Հաղբատայ ցանկացող եղեալ եւ բազում ժամանակաց Սարգիս անուն որ եւ Սամուրեանց երէց կոչիմք ետ գրել զպատմութիւնս ... սքանչելագործ Աւետարանչին Յովհաննու, զոր գրեաց Պրոխորոն ... եւ զտեսիլ նորին Աւետարանչին ապագայիցն ցուցմանց զոր ետես հոգւոյ աւամբ ի Պատմոս կղզւոյ: Ընդ նմին ետ գրել եւ զպատմութիւն զգարձ գերութեան անուանի ... Սր. Նշանիս մերոյ զոր Աւագիազ անուանի (երկու տող քերուած) ... Եւ ես նուստս եւ անպիտան հոգս Սարգիս ... ետես գրել զպատմութիւններս վասն յիշատակի ինձ եւ ծնողաց իմոց եւ եղբարց եւ իմ սնուցած տղայիս Սուքիասիս եւ ընծայեցի առաջի սուրբ Կարապետիդ եւ պատուական եւ փառաւոր սուրբ եղբայրութեանդ եւ զիմ մահու ձայն լսէք, զիմ միաբանութեանն յիշատակն կատարէք եւ զինչ որ այլ յիս կարողութիւն լինիցի առնեմ:

Գրեցաւ սուրբ պատմութիւնս ի Հաղբատ առաջի աստուածընկալ սուրբ Նշանիս, եւթն հարիւր եւ մի (1252) թուականութեան Հայոց ... (քանի մը տառ աւրուած) ի հայրապետութեան Կոստանդնոյ Հայոց Կաթողիկոսի, յեպիսկոպոսութեան երկուց լուսաւոր արանց (բառ մը քերուած) մերոյ տէր Համագաս (երկու բառ նորէն քերուած) նահանգիս եւ մեծաշարկ տանս Հաղբատայ եւ յառաջնորդութեան Այրարատեան դաւառին սուրբ Կարապետին Յովհաննու վանից մեծապատիւ բարունաց տէր Մկրտիչին ...

Կատարեցաւ Պատմութիւն սրբոյ Առաքելոյն Յովհաննու Աւետարանչի: Չմեղապարտ գրիչս Վարդան յիշեցէք յաղաւթս ձեր, ով սուրբ Հարք (Սամուէլեան Ս. Վ. Յուց. հայ. ձեռ. Պոնտոսի Թ. 1, անտիպ):

Այս թուականէն տասը տարի յառաջ Ծեր ոմն Պետրոս սպասաւոր Ս. Նշանիս Հաղբատայ Սահմանաց գիրքը գրել կու տայ Յովհաննէսի (Յովսէփեան, Յիշատակարանք, Ա. էջ 951):

Համագասպ եպիսկոպոսի յաջորդն է ՅՈՎՀԱՆՆՍ ԴՕՓԵԱՆ, որ 1265ին արդէն իրրեւ արքեպիսկոպոս կը ներկայանայ: Յովհաննէս Երզնկացի գինքը կ'անուանէ «Մեծադք Տէր Յովհան յաղնուական զարմից եւ բարետոհմիկ հարց ծնունդ, զի Դօփեան տոհմէն էր:» Հաղբատի եւ այլ վանքերի արձանագրութիւններէ մէջ Յովհաննէս եպիսկոպոսը

յիշուում է որպէս շինարար, նուէրընկալ, եւ առաջնորդ, բայց նաեւ ձեռագրական յիշատակարանների մէջ որպէս մեկենաս, վարդապետ եւ սրբագրող» (Յովսէփեան, Հաւուց Թառի Ամենափրկիչը ... էջ 64, Նոյնը, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, Ա. էջ 67, եւ Հայապատում, Բ. էջ 537) : Լոկ գովեստի համար այդ որակումները չեն շոյլուած : Անոնց արժանի էր : Ժամանակակից կարեւոր հարցերու մէջ մտած է : Հաւանօրէն անոր եռանդուն գործունէութեամբ գումարուած է Հաղբատի ժողովը, որուն զբաղման նիւթը մօտաւորապէս կարելի է կռահել Ձազավանքի ժողովի կանոններիէ (Յովսէփեան, Հաւուց Թառի Ամենափրկիչը էջ 64) : Վարդանի Երգերգոյի մեկնութիւնը 1265ին կը գրուի «Յաստուածամերձ սուրբ ուխտ»... յարհիւփսիկոպոսութեան Տէր Յովհաննիսի (Գեորգեան, Յուց. էջմ. էջ 532) եւ 1267ին Տօնապատճառ մը (Յովսէփեան, Քարտեզ հայ հնգր. էջ 36) :

Հաւանական է որ Սիւնեաց Ստեփանոս եպիսկոպոսի առ Գրիգոր Անաւարդացի գրուած թուղթի ստորագրողներէն մէկն ալ Յովհաննէս եպիսկոպոս եղած ըլլայ (Օրբէլեան, Պտմ. էջ 461) : Անոր եղբօրորդին դրամական կարեւոր նուիրատուութիւն մը կ'ընէ Հաղբատի զինքը քաջալերելով եւ անոր շինարարական գործունէութեան աջակցելով. «Ես Ծիթվասան ծառայ սուրբ Նշանիս, եղբաւորդի տէր Յովհաննիսի, կացեալ ընդ հովանեաւ սուրբ Նշանիս զիմ հոգւոյ արդիւնս ի հալալ վաստակոց ընծայեցի ի սուրբ Նշանս եւ ի միաբանքս Ժ2 եզն, ԳՈՒ. սպիտակ յառաջնորդութեան տէր Յովհաննէսի եպիսկոպոսիս եւ միաբանքս սահմանեցին մեզ պատարագ զՅայտնութեան տնաւրինեցաւ աւրն զամէն եկեղեցիքս մեզ պատարագել, մինչ մեք կենդանի եմք մեր հաւր Գարբանէլին եւ մաւրն Յացային, յետ մեր ելից Բ. պատարագ իմ եղբաւրն Վաչէի, Աղբերադեղին եւ զայլն մեզ առնեն Ծիթվասանիս... Թուին 2իէ» (Թ. 239, էջ 78—88, Արարատ 1886, էջ 528 եւ Զալալեան, էջ 64 եւն) :

Նմանապէս Յովհաննէսի օրով 1279ին
Բարսեղ քահանայն կը շինէ Ս. Զօրավարք
եկեղեցին իր սրահովը. «Կամաւ նախախնա-
մութեան Աստուծոյ Հաւր եւ յառաջնոր-
դութեան տէր Յովաննիսի ի Թուրին Հայոց ԶԻԸ
ես Բարսեղ քահանայ կանգնեցի զսուրբ Զօրա-

Վարքս եւ շինեցի զսուրբ խորանս լուսոյ յանուն սրբոցս մեծաւ Զանիւ եւ քրտնամուխ անձամբ ի փրկիւթիւն հողւոյ իմոյ եւ յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց եւ սնուցողացն» (Թ. 239 էջ 84, Արարատ 1887 էջ 215 Բրոսսէ էջ 36) :

Իսկ ինքը Յովհաննէս իր շինարարական ընտիր գործունէութիւնը կը պատմէ Ամենափրկիչի ընդարձակ արձանագորութեան մէջ եւ այլուր (Հմտ. Յովսէփեան, Հաւուց Թառի Ամենափրկիչը ... էջ 65, Թ. 239 էջ 119 եւ Արարատ 1887 էջ 34) :

Յովհաննէս Դօփեան, որ եւ Արմանեցի,
նախապէս եղած է Գետիկի եւ Հաղարծնի ա-
ռաջնորդ «Եւ ապա զնաց ի մեծ աթոռն Հաղ-
բատ» (Կիր. Պատմ. էջ 116), ուր հաւանօրէն
երեսուն տարիէն աւելի առաջնորդութիւն
կ'ընէ: Յովհ. Ղրիմեցին կը դրէ «ի վերոյ-
գրեալ թուականացդ (արձանագրութիւն-
ներու) յայտնի չափ ժամանակի առաջնոր-
դութեան նորա, զի ձգի ընդ ամս երեսուն
եւ վեց սկսեալ ի Զէ թուականէ մինչեւ
ցԶԽԳ: Այլ թէ որչափ եկաց եւ անդր մինչեւ
ցվախճան իւր ոչ է յայտ: Գերեզման նորա...
երեւի առընթեր սեմոց հիւսիսային դրան
աւազ տաճարին, յորոյ վերայ թէպէտ չիք
տապանագրութիւն՝ բայց ի խաչարձան անդր
(Ամենափրկչի) յառաջնոյ կողմանէ կայ
դրոշմեալ վերտառութիւն Սուրբ Աստուած,
սուրբ եւ հօգօր սուրբ եւ անմահ որ խաչեցար,
ողորմեա տէր Յովանիսի» (Թ. 239, էջ 120,
Բրոսէ էջ 46):

Յովհաննէս Արմանեցիին հաւանօրէն յա-
ջորդած ԸԼԼայ Աստուածատուր արքեպիսկո-
պոս :

Ունիմ յիշատակագրութիւն մը 1281
թուականէն. բայց մէջը առաջնորդի անունը
լուռած է : Կարդանք զայն՝ «ՁԲարսեղս սպա-
սաւոր բանի որ եւ զգէրքս զրեցի խոշոր եւ
անյարմար, յիշեցէք ի մաքրափայլ յաղակթս
ձեր. ի ծաղկերանդ մարդս յորժամ մտանէ
ոք խիորժելի է ի նմա յարաժամ մնալ ան-
դրէն, ... ուստի վայելել կամեալով նպաստ
եւ ապիկար ոմն Բարսեղ կոչեցեալ ... Ըն-
թացս ի մարդս աստուածային ... բանից
հարց սրբոց առնելով ի նոցունց բանից որ-
քան կարացի, վասն որոյ աղաչեմ... յիշել
զանարժանութիւնս մեր միով այսու աղերսիւ
Տէր Յիսուս ողորմեա մեղուցեալ ծառայի քո
Բարսղի ստացողի գրոցս եւ Հագարաղեղի

Նորին հարազատի, յառաջագոյն ի Քրիստոս
գնացելոյ եւ այլոց եւս եղբարց եւ ազգակա-
նաց . . . ամէն :

Եւ է որ դրեցաւ իմով ձեռամբ խոշոր
եւ անյարմար, եւ է որ ի ձեռս այլոց ի հալաւ
արդեանց իմոց, ի դերահռչակ ուխտս Հաղ-
բատայ, յորում եղէ արժանի կոչել սպա-
սաւոր բանի յաղազս որոյ ծաղկաքաղ արարի
սակս իմոց պիտոյից ... Եւ եղեւ աւարտ
սորին ի մերում թուականի եւթնհարիւրե-
րորդի երեսներորդի ԶԼ (1281) ամէն:»
(Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 1324):

Երկու տարի յետոյ կը գրուի Շարակ-
նոց մը եւ անոր մէջ յստակօրէն յիշուած է
Աստուածատուրի անունը:

«Փառք գրեցաւ շարունակ աստուածա-
շունչ տառի շարակնացս ի թլականութեան
հայկազան տումարի (այս է Հայկալ — ՉԼԲ)
ձեռամբ սրբասէր կրօնաւորի եւ գեղեց-
կաշար գրչապետի Յովհաննէս գրչի: Ի
հոյակապ եւ հռչակաւոր սուրբ ուխտս Հաղ-
բատայ, ընդ հովանեաւ սուրբ Նշանացս, որ
աստ կան հաւաքեալ եւ Ամենափրկչիս: Ի
յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Աս-
տուածատուր արքեպիսկոպոսի եւ թալ միա-
բանիցս որ աստ կան հաւաքեալ տէր Դանիէլ
վարդապետի, տէր Գրիգորի եւ տէր Մա-
նուէլի, տէր Մկրտչի եւ տէր Խաչատրի,
տէր Կարապետ եկեղեցապանի եւ տէր Ներ-
սէս ձեռնասնունդ աշակերտի իմոյ որ բա-
ղում աշխատութեամբ ուսուցի . . .» (Արա-
րատ 1909 էջ 871, Ակիւնեան, Հաւաք Յիշատ.
Իջմ. 1577):

Աստուածատուր կ'երեւայ թէ իր ծերուն
թեան ատեն կամ ուրիշ պատճառով մը իրեն
օգնական կ'ունենայ ՂՈՒԿԱՍ, որուն հետ կը
յիշուի սա արձանագրութեան մէջ «Կամա՞ն
ամենակալին Աստուծոյ եւ Յոհաննս փակա-
կալ սուրբ ուխտիս Սանահնոյ եկի ի դուռս
Ս. Նշանիս առաջնորդութեամբ տէր Ղու-
կաս արքեպիսկոպոսի եւ տէր Աստուածատրի
ետու մեծածախ սկի(հ) կամակցութեամբ
եղբարորդւոյս Ներսէս փիլիսոփայի ...»
(Թ. 239 էջ 121)։ Յովհաննէս Ղրիմեցին կը
խորհի թէ ասոնցմէ մէկը կրնայ Սանահինի
առաջնորդ ըլլալ եւ միւսը Հաղբատի, որ
անընդունելի չ'երեւար երբ խորհինք թէ Սա-
նահինի փակակալը եկած է Հաղբատ եւ
նուէրր ըրած ժամանակ կը յիշէ նախ իր

առաջնորդը (այս է Սանահինի) եւ ապա
Հաղթատի վանահայրը:

Ինչպես երբեմն Վարդան Մեծ վարդապետը կը նստի Հաղբատի մէջ եւ գրելով կը զբաղի, այսպէս նմանապէս հոն կը բնակի Յովհաննէս Երզնկացի եւ գրութիւններով կը պարագայի (Հմմտ. Արարատ 1887, էջ 264) :

Աստուածատուրի (Կամ Ղուկասի) յա-
ջորդներու անունները մեզի չեն հասած:
Տապանաքարի մը վրայ կայ «ՊԽԴ (1395) Այս
է հանդիստ տէր Յովաննիսի» եւ Յովհաննէս
Ղրիմեցի կը համարի թէ այս Յովհաննէ-
սիՍը Հաղբատի առաջնորդ եղած ըլլայ (Թ.
239 ԿՅ 121) .

Ասոր յաղորդը կրնայ ըլլալ ՅԱԿՈՒՆ, որ 1423ին Կաֆայի մէջ գրուած Շարահնոցի մը մէջ կը ինդրուի յիշել. «Զոէր Յակոբ վա- նահայր մեծահռչակ ուխտին Հաղբատայ» (Հմմտ. Խաչիկեան, ԺԵ. դարի Հայ. 2եռ. Յիշատ. Ա. էջ 312) :

Յուզ. Լըիմեցի ինչպէս անոր՝ նաեւ
ԶԱՔԱՐԻԱՍ, առաջնորդին անուանեցրու անծա-
նօթ է :

Հաղբատի մէջ 1437ին «ի յառաջնորդութեան տէր Զաքարէի» Մարտիրոս կը գրէ Շարակնոց մը (Նօտարք, էջ 112), իսկ 1438ին հոն կ'արտագրուի ճաշոց մը¹⁰.

«Փառք ... Արդ ես Աստուածատուր մեղապարտ երէց բազում ժամանակաց պրիւ, ի Կոստեւուց երկրէն ի զեղջէն Արծնոյ, ցանկացող զդէ այս հոգեկից տառիս ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ որդի մեծի Խորազմին Թամուր Շահ Ռուխ կոչեցեալ չորս անգամ բազում հեծեթօք անգուլթ եւ անագորոյն եւ անողորմ եւ ծարաւի արեան քրիստոնէից, երեկ ի վերայ աշխարհիս Թալրիւղոյ, որ բազում անասելի աւերած ի վերայ աշխարհիս Հայոց ... Յայս դառն եւ կսկծալի ժամանակիս կարի աղքատութեամբ եւ չքաւորութեամբ ետու զրեկ զգիրքս ի յօտար երկիրս Վրաց ի ձեռս Յովհաննէս քահանայի ի վանքս Հաղբատայ առ զբան սուրբ Նշանիս եւ սուրբ մայրաքաղաք Խմբարանիս եւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գրիգորիս առ զբան սուրբ վարդապետաց եւ սուրբ Հայրա-

¹⁰ Արէլ 1410ին ի վանս Սարկաւազանց կոն-
ցելյոյ ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս կը գրէ Գր.
Տաթեւազարյ Մատթէի մեկնութիւնը (Նօտարք էջ 35,
ուր կը կարծուի թէ Սարկաւազանց վանքի տակ կա-
րելի ի հասկնալ չարարութիւն) :

պետաց եւ մեղսաբարիչ եւ աստուածաբնակ տաճարացս ի յառաջնորդութիւն տէր Զաքարիա արհի եպիսկոպոսիս եւ ի թագաւորութեան Վրաց Ալեքսանդրէի եւ պարոնութեան տեղւոյս եւ նահանգիս Լօռոյ մեծափառ եւ աստուածատէր իշխանաց իշխանիս պարոն Բեչքենին յազգէն Օրբէլեանց, թոռնի մեծի պարոնին Բիւրբելի ի թուականիս հայկական տոմարիս ՊՁԻ ամին» (1438, Նոտարք, էջ 115—116, հմմտ. Հայապատում Բ. էջ 557—558 եւ խաչիկեան, ԺԵ. Դարի հայ. Զեռ. Յիշատ. Ա. էջ 485):

Զաքարիայի յաջորդը եղած պիտի ըլլայ Գրիգոր, որ համամիտ ու համակարծիք կ'ըլլայ Հայոց կաթողիկոսութեան էջմիածին փոխադրութեան: Յովհ. Ղրիմեցին կը գրէ «Գրիգոր երկրորդ ի հնգեկոսան դարու կացեալ առաջնորդ յոխտիս ի թուականի Հայոց ՊՂ յամի Տեառն 1441, դտաւ եւ ինքն ընդ այլոց բազմաց ի մեծ ժողովն յայն դուստրեալ ի սուրբ էջմիածին վասն նորոգութեան նորին, ուր եւ ընտրեցաւ եւ նստաւ կաթողիկոս Կիրակոս Վիրապեցի ի գաւառէն Քաջբերունոյ: Այս Գրիգոր գտանի ի պատմութեան յիշատակեալ ժողովոյդ, իսկ յարձանագիրս չեբեւի ուրեք բնակին յիշատակութիւն զմանէ, սորայն եւ նախորդ եւ յաջորդ եւ ամք առաջնորդութեանն անյայտ» (Թ. 239 էջ 121):

Դաւիթ Բաղիշեցի ժամանակագիրը ժողովականներու մէջ կը յիշատակէ Գրիգոր վարդապետ ի սուրբ Թաղէոսէ, «Գրիգոր միւս վարդապետ Հաղբատու» (հմմտ. Նոտարք էջ 122):¹¹

Գրիգոր ապրած է խոովայոյդ շրջանի մը մէջ, ինչպէս 1441ին գրուած յիշատակագրութիւն մը այնքան յուզումնալից կը նկարագրէ:

«Փառք ... արդ յանկ ելեալ աւարտեցաւ ... ի մեծահոգի եւ աստուածաբնակ եւ հրեշտակաճեմ յաթոռս Հախրատայ ընդ հովանեաւ աստուածազաւր եւ արեամբ ներկեալ սուրբ Նըշանիս եւ երկնաման կաթողիկէիս եւ բարձրացեալ բազկատարած Փրկչիս եւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կաթապետիս եւ Առաքելոց եւ սուրբ Կարապետիս (այսպէս) եւ սուրբ Գրիգորիս եւ սուրբ Յակոբիս եւ սուրբ Նիկողայոսի

¹¹ Հմմտ. Նաեւ Յակոբեան Վ. Ա., Մանր ժամանակագրութիւններ. Բ. էջ 353):

եւ սուրբ տէրունականիս եւ Լեղանի սուրբ Նշանիս եւ Շեքիքարի սուրբ Սարգիսիս եւ սուրբ Երրորդութեանիս եւ Սարկաւազ վարդապետի սուրբ զամբարանիս եւ թեփակեր ճգնաւորի սուրբ չիւրմիս եւ այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ, ի պատիւ արեամբն ներկեալ սուրբ Նշանիս ի թուականութեան տոմարի Պ երրորդի եւ իննսուն երրորդի — 1441 — ի դառն յամբ(ի) ժամանակի, յորում սաստկացեալ էր սուրն Իսմայէլացւոց ի վերայ մեր հալածանաւք ըստ յառաջատես տեսեանն սրբոյն Սահակայ, որ եւ տատանեալ ծիփմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ եւ արտաքուստ, որ ախշութիւն տեսականի եւ միջնունն գործոյս: Զի յամ ամի Դանն Դարվրժու Զահնշահ Իմիրզայն — որդի Թուրքման Ուսուֆին որդւոյ Դարա Մահմուտին ելեալ բազում զաւարաւք եւ անթիւ հեծելաւք մահմետականաւք եկն ի Վերաստան ի վերայ Վրաց, զի ոչ հնազանդէին ազգին Տաճկաց, փախստական եղեն ազգն վրաց եւ մտան յԱրիւստիս եւ մնաց ազգս Հայոց, որք եկեալ էին եւ բնակեալ ի Վրաց տունս ի ձեռն անաւրինաց եւ իբրեւ զկառավար զազան յարձակեցան ի վերայ Հայոց եւ սուր եղին ի վերայ եւ սպանին եւ բազում եկեղեցիք ի հիմանց տապալեցին եւ զբազում մանկունս ի մարցըն խլէին եւ ընդ քարիւ հարկանէին եւ մայրն զայն տեսանէր եւ զբազում մանկունս անմեղս մերկացուցանէին եւ սրով խոցոտէին եւ տղայն ճէշր եւ աղաղակէր եւ լայր եւ անաւրէնքն ծրծաղէին եւ ասէին ահա ձայն որ յիւրեանց Բեհեշտէն կու գայ եւ մայրն եւ զայն տեսանէր եւ աղէղարչեալ մորմոքէր եւ լայր եւ ոչ ոք էր որ աւզնէր, բազում կանայք զտղայն ի գիրկն աթիւն եւ քարի վայր անկանէին եւ գ. ամիս նստան ի վերայ ամուրին Սամշուտու եւ յորժամ խաբէութեամբ առին զբերդն, յախշտակեցին զինչս եւ բաժանեցին զարքունի կանայքն կամ որպէս խլէին» (խաչիկեան ԺԵ. Դարի հայ. Զեռ. Յիշատ. Ա. էջ 514):

Գրիգորի յաջորդած պիտի ըլլայ Թովթ ՄԱՅ եպիսկոպոսը, որ Յովհ. Ղրիմեցիին անձանթ կը մնայ: Հետեւեալ յիշատակագրութեան մէջ կայ անոր անունը. «Յանուն ... ես Մուտաշէս ծախեցի զիմ հայ-

րենի աւետարանս քեզ խաչատուր իրեցիդ որդոյ Յոհաննիսի ի գաւառէն Եղիշէ Առաքելոյն ի յաթոռոյն Զրվչկայ վկայութեամբ մեր եպիսկոպոսի Թովթի եւ սպասաւորի սուրբ ուխտին Հաղբատայ» (Բարխուդարեան, Արցախ, էջ 269 եւ խաչիկեան, ԺԵ. Դարի հայ. Զեռ. Յիշատ. Ա. էջ 618):

Թովթայի թափուր թողուցած առաջնորդական դահի վրայ կը բազմի Տէր ՂՈՒԿԱՍ, եւ այն դուցէ 1452ին (ամէն պարագայի այդ թուականին վանահայր է): Այդ թուականին կը գրուի Քարոզգիրք մը «ի վերադիտողութեան նահանգիս Վրաց տէր Դուկասու Հաղբատայ արքեպիսկոպոսի» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. Թ. 2156):

Երեք տարի յետոյ 1455ին «ի վերայ — դիտողութեան մերոյ նահանգիս տէր Դուկասու» Յովհաննէս քահանան Աւետարան մը կ'արտագրէ (անդ, առնուած էնֆիաճեանցի Հայ. Զեռ. ցուցակէն, Թ. 79):

Նաեւ ճիշդ միեւնոյն տարին ԱՍՏՈՒԱՅԱՏՈՒՐ առաջնորդի օրով Գրիգոր կը գրէ Աւետարան մը (Բարխուդարեան, Արցախ, էջ 281), որով կարծեմ թէ կարելի է խորհիլ թէ Դուկաս 1455ին մեռած ըլլայ եւ անոր յաջորդած՝ Աստուածատուր: Ասոնց անունները Յ. Ղրիմեցին չի յիշատակէր:¹²

Աստուածատուրի առաջնորդութեան շրջանին Հաղբատի մէջ բաւական թուով միաբաններ կային, ինչպէս սա յիշատակագրութիւնը կը ցուցնէ.

«Արդ եղեւ զրաւ զընթեան սորա (ճաշոց) ի շրջագայութեան հայկական տուսմարի Զ եւ է (1458) ի հայրապետութեան Տեառն Գրիգորի ի Վաղարշապատ արքայանիստ քաղաքի ի բուն քահանայապետական յաթոռ որ է Իջնումն Աստուծոյ Բանին եւ յաշխարհակալութեան տանս Հայոց Զահնշահի Թուրքմանի եւ արեանարբու դանի, յաստուածապահ գաւառս Լաւոյ ի յերկնահանգէս մեծարդոյ եւ գերահոգի ուխտի Հախրատ վերածայնելոյ ի գրան մաւրս լուսոյ Ս. Սիովնի ի հրաշափառ կաթողիկէ սուրբ տաճարիս եւ արեամբ

¹² Երզնկայի Աւագ վանքի մէջ կը յիշուի Ներսէս Հաղբատացի մը (1464ին), որ ինչպէս կը կարծեմ Հաղբատ գիւղէն ըլլալու է (Արարատ 1918, էջ 600—604):

ներկեալ աստուածընկալ սուրբ Նշանիս: Եւ յառաջնորդութեան սորա տէր Աստուածատուր, զոր ի յաւուրս եւ ի ժամանակս յայս կան բազում կրանաւորք եւ աղաւթարարք տէր Դուկաս, տէր Աստուածատուր, փակակալ, Տիրատուր, Գրիգոր, Պետրոս, Գաւրգի, Յովսէփ, Միսիթար, Ներսէս, Յովս, Ոհս, Վարդան, Հայրապետ, Դաւիթ, Արքաճամ, Արթուր, զոր Տէր Աստուած ընդ երկար աւուրս արասցէ զոսս: ... Յիշել ի Տէր զՅովհաննէս վարդապետն, որ զաւրինակն շնորհաց ... նաեւ զեղբայրն իմ ըստ հոգւոյ զԳրիգոր կրանաւորն եւ զստացաւ զրոցս զՋանաղիկ վարդապետն եւ զկենակիցն իւր զՄինա խաթուն (եթէ Մինա խաթուն զեռ կենդանի է վարդապետն կարդալու է վարդապետն) եւ զհանդուցեալ որդիքն իւր զՄկրտիչ եւ զԱստուածատուրն» ... Գրիշն է Յովհաննէս, որ է «Ծեր եւ ծանրացեալ աչաւք» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Cod. Arm. Laz. 8. f. 582):

Աստուածատուրի յաջորդած կրնայ ըլլալ ՊԵՏՐՈՍ հայրապետ, որ 1491ին կը մեռնի, ինչպէս իր տապանագրէն յայտնի է «Այս է հանգիստ Պետրոս հայրապետին, թուին ԶԽ» (Թ. 239, էջ 122, Արարատ 1887, էջ 72, Արձագանք 1884, էջ 628): Անոր մասին անդրադոյն տեղեկութիւններ կը պակսին: Ապա իրարու յաջորդած կ'ըլլան ԳԵՈՐԳ եպիսկոպոս, ՅԱԿՈԲ, ՎԱՐԴԱՆ մեկնիչ քաջաբան, ՌՈՒՍԻՆՈՍ, ԲԱՐՍԵՂ եւ ԳՐԻԳՈՐ առաջնորդները: Այսպէս՝ Երզնկեանցի համեմատ (Արարատ 1887 էջ 264):¹³

Պետրոսի յաջորդ ընտրուած է ՅՈՎՀԱՆՆԷՍ¹⁴, որուն օրով 1494ին խաչատուր

¹³ 1488ին Վարդան Աւետարան մը կը գրէ «ի յերկնահանգէս եւ գերհոգի ուխտս Հաղբատ» (էջմիածին, ամսագիր, 1950, Թ. ԺԱ—ԺԲ, էջ 84):

¹⁴ Գանձարանի մը մէջ կը մտնի «Զապաւաշխատող զիգնատիոս եպիսկոպոս Հաղբատացի յիշեցէք ի սուրբ յաղաթս» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Երեւան, 354: Հաղբատ գիւղէն է սա թէ Հաղբատ վանքի անձանթ առաջնորդ մը երեւան կու գայ: — 1498ին «ի սուրբ ուխտս ի Հաղբատ առ ոսո Տեառն Սարգիս կաթողիկոսի կը գրուի Մաշթոց մը (անդ էջմ. 1084, հմմտ. Կարենեան, Տոպ. էջմ. 1055): — «Ծագիկի» մէջ (1898, էջ 438—439) կայ «ի ժամանակս փայտահոգութեան Դուկասայանիս եւ ի թագաւորութեան Վրաց Միմըն թագաւորին (ուստի 1619—1630 թուականներուն) որ նա աւերեաց Լոռի եւ զվանորայս եւ զերացոյց բազում անօթս եւ գրեանքս եկեղեցեաց: Ես Տաւրեցի պարոն Փիլոյի որդի պարոն Բայինդուրս ի հալալ արդեանց իմոց գնեցի

արեղան կը գրէ Շարակնոց մը (Ակինեան, անդ, թ. 1627):

Դարձեալ նոյն թուականին «Եղեւ զրաւ գրչութեան ... ի սուրբ եւ ի հռչակաւոր ուխտաւ Հաղթատու ընդ հովանեաւ կաթողիկէիս եւ աստուածընկալ սուրբ Նշանիս եւ այլ սրբութեանց, որ աստ կան հաւաքեալ ի հայրապետութեան Սարգսի Հայոց կաթողիկոսի եւ ի զանութեան թաւրիթի թաղաւ Ռեստոմբ բէկի ... սան բէկին: Եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Յոնանէս արհիեպիսկոպոսին եւ միեղին եղբարցս: Արդ զերեցաւ Մաշտոցս ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի սուտանուն արեղայի, որ անուամբ միայն եմ եւ ոչ զործով: Ես Յակոբ քահանայս ետու գրել զՄաշտոցս ի հալալ ընչից իմոց ի վայելումն անձին իմոյ եւ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ մաւրն իմոյ Շամամին» (Ակինեան, անդ, Երեւան, թ. 455):

Գրեթէ ամբողջ դար մը թանձր խաւար մը կ'իջնէ Հաղթատի պատմութեան վրայ եւ այդ խորհիլ կու տայ թէ վանքը ծանր օրեր անցուցած պիտի ըլլայ:

Արձանագրութեան մը կ'իմանանք թէ 1586ին¹⁵ առաջնորդ է Մատթէոս «բայց ամբ առաջնորդութեան նորա անյայտ, նոյն պէս եւ նախորդն», բայց յաջորդը հաւանական թուի թէ է' Կիրակոս, զի «մերձ է ժամանակաւ» (Յովհ. Ղրիմեցի, թ. 239 էջ 122):

Կիրակոսի գործունէութիւնը կը ֆնայ անձանթ, միայն անոր մահը ծանօթ է. այդ կը հանդիպի 1629ին, ինչպէս իր տապանադիրը կը ցուցնէ «Կիրակոս տեղոյս թուին Ռէճը» (թ. 239 էջ 123 եւս Արարատ 1387, էջ 72):

Անոր յաջորդած կ'երեւայ Մինաս: 1641ին «Արդ եղեւ զրաւ աւարտ Աւետարանիս ի թուին Հայոց Ողի ի գաւազանս»:

սուրբ Աւետարանս եւ զարծայթած արակաքն Հաղթատոյ, այլ եւ ետու ի դուռն Հաղթատոյ սուրբ Նշանին վասն յիշատակի հոգւոյ իմոյ»:

¹⁵ Վասիլ քահանան 1594ին իր գրած Յիշատակագրութեան մէջ կը գրէ «Քանզի արեւմտեան զապաղիս հետ իմով ի վանքն նորուն եւ համբուրեցի գերեզմանն, զկենդանի եւ զթշկաբաշի զերեզման նորա եւ առեալ զնորա սաղմոսարանն եղի ի վերայ աշաց իմոց եւ որպէս էր բանքն այն սոյն պէս գրեցի անթերի» (Սիւրբէան, Յուլ. հայ. Զեռ. Հալէպի Ա. էջ 124—125):

նութեան Հաղթատոյ սուրբ Նշանին Մինաս վարդապետին...» (Կարենեանց, Յուլ. հայ. էջ 16. թ. 1848):¹⁶

Անիկա 1649ին նորէն կը յիշուի «Փառք աւարտեցաւ ... ի քաղաքն Տիւրիս ի դուռն փեթլայիմու սուրբ Աստուածածնայ ... ի թաղաւորութեան Վրաց տան Բագրատունեան աղդէ Ռոստոմ խանին, զոր ընդ երկար պահեսցէ Տէր Աստուածն ամենայն: Եւ ի հայրապետութեան սուրբ էջմիածնի Տեառն Փիլիպոս կաթողիկոսին եւ յառաջնորդութեան Հաղթատոյ Մինաս րարունապետին ձեռամբ ... Սարգիս իրեցի ... ի խնդրոյ Շահապարոնին» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Երեւան 24):

Մինասի պարապ թողուցած գահին վրայ կը բարձրանայ ԱԻԵՏԻՍ, որ ծերերու աւանդութեան համաձայն կը պաշտօնավարէ ԲԱՐՍԵՂԻ հետ (թ. 239 էջ 124): Արձանագրութեան մը մէջ կայ «Յառաջնորդութեան թուամանի որդի Բարսեղ եպիսկոպոսի եւ Աւետիս եպիսկոպոսի Հաղթատոյ եւ թիֆլիսցի խօճայ Մարութենց Յակոբ տվի ի դուռն Հաղթատոյ սուրբ Նշանին մէկ զանգակս յիշատակ հօրն իմոյ Գուլասպին, թուին ՌՃԴ» (անդ էջ 123):

Աւետիսի մասին ունինք «Փառք ... կատարեցաւ խնդրածս յԱւետիս» եպիսկոպոսին եւ միաբանացն ամենեքեան, որ է առաջնորդ Հախրատայ սուրբ Նշանիս. յիշեցէք ...: Դարձեալ յիշեցէք հոգեւոր մայր մեր Աղիդ ապաշխարողս, որ շատ աշխատանք ունի այս սրբոյ դռանս ...: Զվերջին կաղմող մեղայաբարտ եւ սուտանուն Գարիանէ ապաշխարաւդս յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ, եղբարք իմ թողութիւն շնորհեցէք ինձ աչքս վատայտես էր, խիստ խաղաղութիւն էր ժամանակս թագաւորութեան Առեստում խանին էր, առաջնորդութիւն էջմիածնայ Տեառն Յակոբայ, որ երեկ Վրաստուն թիպլիս քաղաքն Ե. ամիս եկաց եպիսկոպոսունք ամենեքեան յինքեան ունէր, չէն կենայ դարձաւ ուրախութեամբ աթոռն իւր, որ շինել էր, յԱւետիս եպիսկոպոսն, եկեղեցին իւր եւ խիստ աշխատեցան ամենեքեան յիշեցէք

¹⁶ 1643ին Յովհաննէս կրօնաւորը կը գրէ Հաղթատի մէջ Դաւթի Սահմանադր (Կարենեան, Յուլ. հայ. էջ 16. թ. 1848):

... թվին (Ռ. ՃԶ)» 1657, Ակինեան, Հաւաք. Յիշատ. Երեւան թ. 207):

Աւետիս¹⁷ վանքին պարիսպը կը նորոգէ եւ ուրիշ վերջինութիւններով կը զբաղի: Հողային հարցի մը առթիւ 1660ին սպանութիւն տեղի կ'ունենայ «Ի Հախրատայ տիրոջ եւ կամակցութեամբ Աւետիս եպիսկոպոսի» (Conybeare, Cat. Brit. Mus. էջ 302):

Իսկ 1663ին Աւետիսի օրով Դսեղի մէջ կը գրուի Աւետարան մը (Մառ Ն. Յուլ. Զեռ. Սեւանայ, էջ 43): Ապա՝ շատ ժամանակ յետոյ 1675ին սրբատէր եւ հեղահոգի տէր Աւետիս արհիեպիսկոպոսի ատեն կը գրուի Մաշտոց մը (Ակինեան, անդ թ. 78):

Հետեւեալ կարեւոր Յիշատակագրութեան մէջ արդէն կը յիշուի ԲԱՐՍԵՂ.

«Ես ամենամեղս ... Զաքարիա լոկ անուամբ եւեթ հանդիպեալ ի կարգս սպասաւորաց բանի ըստ վարդապետական ձեւոյ ... բազում ամաւք ... ցանկութիւն ի մտի կալեալ կարի փափագմամբ ստանալ զգիրս արարողութեան ըստ եւթեանց խորհրդոց սուրբ եկեղեցւոյ արարեալ եւ եղեալ ի մէջ հայասեռ ազգի սուրբ վարդապետին Մաշտոցի Սեւանցւոյ. որ էր եղծեալ խառնակութեամբ այլեւայլ կերպից արարողութեանց եւ ի բազումս ի նոցանէ կորուսեալ եւ անհետ արարեալ ի թուութեանց եւ յանհոգութեանց բազմաց: Իսկ իմ յոլովագոյն աշխատութեամբ ի խնդիր ելեալ խնամօք եւ ողորմութեամբ ամենազաւրին գտեալ զբովանդակն եւ ի մի վայր հաւաքեալ, որպէս եւ տեսանի ի սիրելութեանց ձեռմէ: Եւ վարձատուութեամբ բարեպաշտ եւ մեծահաւատ ... պարոն խոճասարն, զի յորդորեցաք զնա եւ տուաք գրել ի հալալ եւ յարգար վաստակոց իւրոց եւ եղաք յիշատակ անջինջ ... ի վայելուչ Ամատունեաց սուրբ Կարապետի Յովհաննափանից, որ է ի յոտն Արագածու սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կաթողիկէիս ... բայց գիտացէ սիրելութիւն ձեր, զի որպէս գրեցաքն ի վերոյ վասն բազում պատճառաց ելաք ի խնդիր վասն ժողովման սուրբ գրոցս, մանաւանդ սակս երկուց հարկաւոր պատճառաց, քանզի սովորութիւն է ի մէջ կարգացողաց ազգիս մերոյ, զի այնքիկ, որ աշակերտք են գրոց եւ անուանի վարդապետք անհոգացեալ եւ անվարժ գոյով իրբեւ հհհաւ ինչ համարեալ զարարողութեան կարգ սորա, ոչ երբեք հոգան, բայց ի ժամու կատարման գործոյն անհմուտս երեւին: Իսկ տգէտքն եւ անուամբնքն ի գեղջկաց եւ յաշխարհիկ քահանայից ոչ երբեք գիտելով բնաւ զկարգ սորին արարողութեանց, որպէս գիտէին այնպէս աներկիւղածութեամբ վարէին: Վասն որոյ հաւաքեալ ի միասին զբովանդակ շարժմունս կարգաց ըստ իւրաքանչիւր յաճախութեան գնացից, եղաք ի ծոց մաւրս լուսոյ վերոյգրեալ սուրբ Աթոռոյս՝ զի սովաւ ի ձեռն առեալ անվար եւ թարց խառնակման զկարգաւորութիւն օրինաց յառաջեցուցեալ բարեպէս վարեացին բարւոյն կամեցողքն ... Սկսեալ եղեւ ի ժամանակս թագաւորութեան Պարսից Շահաբասի երկրորդի եւ ի հայրապետութեան սրբազան կաթողիկոսին Հայոց Տեառն Փիլիպոսի Աղբակեցւոյ, որ է փոխաւացւոյ կրկին Լուսաւորչի հայկազանս տոհմի եւ իմոյս վարժապետի եւ հոգեւոր երկամբք դաստիարակողի: Բայց կատարեցաւ յամի ՌՃ հնգին թուոյ յաւելուածի ի ժամանակս Տեառն Յակոբայ նոցունց փոխանորդի Զուխայեցւոյ: Որ եւ մեք ... չողաք ի Շօշ քաղաք որ այժմ ասի ըՍպահան, եւ անդ մեծաւ աշխատութեամբ եւ բազում երկունս կրելով ի տեղեաց տեղեաց գումարեալ զբազում աւրինակսն հաւաքեցաք ի մի տասն ամաւ հազիւ թէ կատարուին առնելով, սակս գաղափարացն առձեռն պատրաստ ոչ գտանելոյն եւ անտի դարձեալ եկաք յաթոռ մեր եւ ի վասն մակագրեալ Ս. Յովհաննու որ էր հանգստարան մեր եւ տեղիք բնակութեան: Բայց ի վաղ ժամանակաց էր խախտեալ եւ հնացեալ բովանդակ շինուածքն սուրբ եկեղեցեացն եւ ոմանց ի նոցանէ փայտիւ գտանիսն ծածկեալ: Որ եւ օգնականութեամբ Աստուծոյ վերստին նորոգեցաք մեծապայծառ ճոխութեամբ զբովանդակ հնութիւն սրբոց եկեղեցեացն գե-

¹⁷ Ժե. զարուն ծանօթ է Աւետիս եպ. Հաղթատայի գրիչը, որ Երուսաղէմ ապրած է (Աղաւնունի, Հայ Երուսաղէմ, էջ 40—41):

դեցկապէս յօրինամար: Նաեւ տունս դե-
զեցկապէս եւ սենեակս ըստ բաւականի
հաստատեցաք, ինքեքուստ կողմանէ շուրջ
զպարսպան եւ զայդիս եւ զմիւլքս եւ
զանդատանս եւ զբովանդակ ջուլիս կեն-
դանեաց ի թաղաւորական հարկաց ի դուրս
հանեալ աղատեցաք, նոմոսաւ եւ կնքով
հաստատեալ: Դարձեալ ... յիշեալիք ...
զաշակերտեալ որդեակս եւ զմանկունս
զՅովհաննէս վարդապետն, որ է յաջորդ
իմ եւ փոխանորդ ի սուրբ աթոռս ի կեն-
դանութեան իմում եւ ի մահուան եւ
զհարսեղ եպիսկոպոսն մեծահոգակ սուրբ
աթոռոյն Հաղբատայ, յազատ տանէ, եւ
զՍալաւոս վարդապետն առ Տէր հան-
դուցեալ եւ զփոքրիկ տէր Մովսէս սպա-
սաւոր ծերունոյս եւ զայլ համաւրէն դասս
աբեղայից եւ սարկաւազաց եւ զմիաբա-
նելոց բազմութիւնս, որ աստ հաւաքեալ
կան ի ծոց սուրբ աթոռոյս» (Ակինեան
Հ. Ն. Հաւաք. Յիշատ., էջմ. 953):

Բարսեղ՝ Թումանեան զարմէն է եւ
պաշտօնակից կ'ունենայ Փիլիպպոս ար-
քեպիսկոպոսը ինչպէս կ'երեւայ սա յիշա-
տակագրութեան:

«Փառք ... անպիտան Թումայ սու-
տանուն դպիրս գրեցի սուրբ Աւետարանս
ի գեօղս Աղթալայ ի դուռն նահատակացն
Սահակայ եւ Յովսէփայ եւ այլ սրբոցն
որ աստ կան հաւաքեալ ...: Աւարտեցաւ
գիրքս ի թիւն Հայոց ՌՃԱՍ - 1682 - ի
հայրապետութեան Հայոց Տեառն Եղիա-
զարի, որ է աւարտ գրոյս նստաւ յաթոռ:
Ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Հախ-
պատայ տէր Բարսեղ¹⁸ եւ տէր Փիլիպպոս
արհեպիսկոպոսացն: Արդ յիշեցէք զիս զան-
պիտանս եւ զՀայրն եւ ուսուցիչն իմ
Սարգիս քահանայն, այր արհեստիւ, որ
տեղեակ իսկ է հին եւ նոր Կտակարանացն

¹⁸ «Գիր աղերսանաց գրեալ առ Եղիազար կա-
թողիկոսն ի միաբանիցն սրբոյ Էջմիածնի ի սուրբ
Ներսիսեան» (Հմմտ. Միխիլեան ի. Վ. Համա-
նոտ պատմ. Երուսաղէմի, էջ 107—111) գրութեան
ստորագրողներէն են՝ Ես Բարսեղ վարդապետս Հաղ-
բատոյ, եւ Սահակ վարդապետս Մակուցի... եւ
Սարգիս վարդապետս Հաղբատոյ» (Պողարեան Ն.
Եպ. Մայր ցուց. հայ Ձեռ. Ս. Յակովբեանց թ. էջ
»): — «Առնթեր հանգստարանի Աւետիս եպիսկո-
պոսի յանդիման ժամատան Հաղբատայ յարեւմտից
առ արտաքին պարսպաւ կայ» «Այս է հանդիման Բար-
սեղ եպիսկոպոսի. եւ էի յաղգէ Թումանեանի, որ բա-
ղամ ամս ի յաստ կացի եւ զկեանս իմ աստ ան-
ցուցի. Ին. ամ առաջնորդ կացի, Թումիս ՌՃԲԲ
(1703, Թ. 239, էջ 124):

եւ մայրն իմ Հերիքնաղան եւ կողակիցն
իմ Լաւրիէրօղն եւ Եղբարքն իմ Թամաղն,
Առաքեալն. Դաւիթ» (Ակինեան Հ. Ն. Հա-
ւաք. Յիշատ. 1682):

Նոյն տոհմէն Բարսեղի կը յաջորդէ
Թովմաս եւ «Վարէ գիշխանութիւնն առաջ-
նորդական ամս իբր երկոտասան» (Թ. 239
էջ 124):

Թովմասի մահէն վերջ Հաղբատի
հայրապետական աթոռ կը բարձրանայ
Գրիգոր «Ի Տփիսեաց, Սուրկունեան մակա-
նուանեալ, որ եւ Պարոն տէր յորջոր-
ջեալ պատուոյ անուամբ ... Սա բազմաշ-
խատ եղեւ ի ճոխացուցանել զայս մենաս-
տան ամենայն կարեւորօք» (Յովհ. Ղրի-
մեցի, Թ. 239 էջ 124—125): Անոր աստեւ
քաղաքական կարեւոր անցքեր տեղի կ'ու-
նենան հայ աշխարհի մէջ եւ ան գիտէ
պարագաներու համաձայն իրեն յանձնուած
նաւը ղեկավարել:

Գրիգորի թաղումէն¹⁹ յետոյ «Ձախա-
րիա Պաք-իմեան ի քաղաքէն Տփիսեաց ...
յաջորդէ զառաջնորդութիւն ուխտիս անձամբ
գրաւեալ զայն, զի ոչ ոք ի քահանայից,
յիշխանաց եւ ի ժողովրդոց քաղաքին հաճ
եւ հաւան էր ընդ առաջնորդութիւն նորա
եւ ինքն իսկ չեւ եւս էր ձեռնադրեալ
եպիսկոպոս: Այսու օրինակաւ եկաց նա
ընդ ամս ինչ ի նմին իշխանութեան
ընդդէմ կամաց հասարակութեան, մինչեւ
ապա ի զօրանալ շփոթի եւ հակառակու-
թեան ի մէջ նորա եւ ժողովրդեան, բռնու-
թեամբ արտաքսեն զնա ի քաղաքէ անտի
եւ նա չկարացեալ առնել ինչ եւ չկացեալ
ուրեք ի մերձեկայս դէմ եղեալ զնայ
ուղղակի ի հեռաւոր աշխարհ Պարսկաս-
տանի» (Թ. 239 էջ 130): Հոն Քէրիմ
խանին պաշտօնեաներէն մէկը ընտելով
անոր շնորհքին կ'արժանանայ եւ անկէ
Յակոբ Կաթողիկոսին թուղթ մը կը ստա-
նայ որ զինքը եպիսկոպոս ձեռնադրէ:
Կ'անցնի Էջմիածին եւ կաթողիկոսը խանին
բաղձանքը կը կատարէ: Չաքարիա իբրեւ
եպիսկոպոս կը դառնայ Թիֆլիս, ուր կը
ներկայանայ Հերակլ Թաղաւորին, որ զինքը
մեծապէս կը յարգէ: Այս տեսնելով Հաղ-

¹⁹ Ի Թիֆլիս՝ տապանադիր Գրիգոր առաջ-
նորդի «Այս է հանգիստ աշխատաւոր սուրբ ուխտիս
առաջնորդ Գրիգոր վարդապետի Թիֆլիսեցոյ ի
թուին ՌՄ» (1751, Թ. 239, էջ 127):

բատացիները, մանաւանդ որ անոր հան-
դէպ եղած ատելութիւնն ու գրգռումն ալ
նուազած էր, զինքը կ'ընդունին իբրեւ
հօտապետ: «Եւ նա այնպէս վարեաց զիշ-
խանութիւն առաջնորդական մինչեւ ցմահ
իւր, կացեալ յառաջնորդութեան ամս իբր
տասն եւ ինն ի մահուանէ անտի Գրիգորի
եւ ի ՌՄԺԹ թուականին Հայոց. յամի
Տեառն 1770 վախճանի ի քաղաքի անդ ի
Տփիսիս եւ թաղի ի կաթողիկէ եկեղեցոյ
հանդէպ բեմի սեղանոյն» (Թ. 239 էջ
132): Բայց դեռ երկու խօսք:

Չաքարիա առաջնորդը²⁰ «Կամէր յափը-
տակել անիրաւութեամբ զթեմս Սանահնոյ
եւ Աղարծնոյ», բայց, Ղաղախցիները Սի-
մէոն Կաթողիկոսին բողոք կը ներկայացնեն
եւ բացայայտ կըսեն «Թէ տայցես եւս զմեզ
Չաքարիա վարդապետին, մեք նմա ոչ եմ
ծառայելոց» (Դիւան Գ. էջ 138):

Սիմոն կաթողիկոսը²¹ թէեւ Ղաղախ-
ցիները կը յորդորէ Չաքարիայի ընդդիմանալ
եւ անոր մարդիկը չընդունել, սակայն
յետոյ Չաքարիային, որ Հերակլ Թաղա-
ւորին սիրելին էր եւ անոր վրայ իր
յոյսը դրած էր «Ետ եւ զսրբոյ Աթոռոյս
թեմի եւ զՍանահնոյ թեմի առաջնորդու-
թիւնս եւ զնուիրակութիւն ամենայն երկրին
մինչեւ ցերիս ամս» (անդ էջ 533): Բայց
այդ կ'ընէր իբրեւ ուրոյն վանքի եւ ոչ
թէ Հաղբատի ենթարկուած վանքի մը,
ուստի եւ անոր անկախութիւնը կը պա-
հուէր (անդ էջ 138, 268 եւ 710):

Սիմէոն կաթողիկոսի կամքն էր նոյն
իսկ, որ Չաքարիա Հաղբատի առաջնոր-
դութեան տիրոջն հրաժարի եւ «տէրու-
նի լիցի թեմն Հաղբատու, որովհետեւ
այժմ աւերակ կայր սուրբ վանքն (ըստ
որում Աղէքսանդր սրբազան հայրապետն
արարեալ էր տէրունի, վասն աւերելոյ
վանիցն) եւ լու թիֆլիսի առաջնորդ կո-
չուի: Սակայն Հերակլ Թաղաւորը, Չա-

²⁰ Շինարարական գործունէութիւն ունեցած է
(Դիւան, Թ. էջ 215—217):

²¹ Չար լեզուներ կը գրգռարտեն թէ «Չախապա-
տու արդիւնսն զաթիւ կամի սրբազան վեհն (Սի-
մէոն), (զոր ան կը հերքէ) եւ Փոստուլայ եւս գրեաց
առ սա սրբազան վեհն ասել արքային, զի վասն
Հախապատու արդեանց զմէկ կարգեաց զանձապետ,
եւ կամ Առաջնորդին յանձնեացէ, զի զարդիւնսն
Հախապատու ժողովեալ առ ինքն պահեացէ, զի մի ոք
ձեռնամուխ լիցի նմա եւ յետոյ ինքն որպէս կամիցի
այնպէս արասցէ» (Դիւան Բ. էջ 284—285) Հմմտ.
էջ 593):

քարիա առաջնորդը եւ ժողովուրդը (Թիֆ-
լիսի) «որք Հախապատու էին թէմ» այդ
տրամադրութեան եւ որոշումին կը հա-
կառակին «Ասէին զանուն առաջնորդու-
թեան Հախապատու ոչ կամիմք թէ պա-
կասեցի ի միջոյ մերմէ, այլ ի քաղաքս
ի միջի մերում նստցի, որքան աւեր կայ
սուրբ վանքն» (անդ էջ 532): Այս հարցը
Յակոբ Կաթողիկոսի ատեն ալ յարուցուած
է (անդ էջ 532):

Չաքարիայի մահէն վերջ Հաղբատի
եւ Տփիսիսի առաջնորդութիւնը կը ստանձնէ
1771ին Ռէքէտս, որ «այր հեղ եւ առա-
քինի» է եւ հինգ տարի պաշտօնավարելէ
յետոյ կը քաշուի Էջմիածին, ուր ծեր
հասակին մէջ կը մեռնի: Անոր օրով Միխի-
թար քալանթար «Գայ նախ ի Հաղբատ՝
եւ մտեալ զառաջինն յաւազ եկեղեցին
սուրբ Նշանի երկրպագէ ի նմա բարձրե-
լոյն Աստուծոյ եւ ապա հայեցեալ ի խրթնու-
թիւն նորա եւ յանջութիւն, զի այր
աւազակաց էր լեալ ի բազում ժամանա-
կաց հետէ յամայութեան կալով ... զի
աղտեղեալ էին բովանդակ եկեղեցիք ուխ-
տիս յաւազակաց անտի եւ բազմութիւնք
բուսոց եւ թփոց խիտ առ խիտ բուսեալ
զնոքօք ծածկեալ ունէին զըլուխս նոցա
եւ զորմունդ առհասարակ, վաղվաղակի հրա-
մայէ բազմութեան արանցն սրբել եւ
մաքրել եւ զամենայն բոյսս եւ տունկ
առհասարակ յարմատոց խլել: ... շրջեալ
ապա ի զնին համօրէն տեղեացն եւ ան-
կեանց մենաստանիս եւ մատրանցն եւ
խորանաց, գտանէ գերկոսին վերանխորանս
սուրբ Գրիգոր եկեղեցոյ լի անհամար
գրչագիր եւ երկաթադիր հնազոյն մա-
տենիւք, նոյնպէս եւ զչորեանն խորանս
միջնայարկի զանգակատանն, յորոց գրա-
դումս ի վայր բերեալ զննէ միառմի եւ
անդէն ի տեղիս իւրեանց ամփոփէ ...»
(Բազմ. 1956, էջ 108, Թ. 239, էջ 132—
134):

Չաքարիա իր առաջնորդութեան ամ-
բողջ շրջանին Տփիսիս կը բնակի եւ որ-
քան կ'երեւի Հաղբատի վանքով շատ չի
հետաքրքիր: Նաեւ Ռէքէտս հոն կ'անցնէ
իր տարիները եւ անկէ կը կառավարէ
վանքը, որ գոնէ Միխիթար Քալանթարի
նման անձի մը խնամքին կ'արժանանայ:
Ռէքէտս անշուշտ ցաւով կը տեսնէ այն

ասպատակութիւններն ու աւերումներն ու աւարումները, որոնք Նատրշահի մահէն ետքը սկսան՝ եւ շարունակուեցան: Անոնց հարուածները հասան նմանապէս Հաղ-բատի եւ ան մնաց առանց առաջնորդի, զի առաջնորդը կամ ճշգրտոյն առաջ-նորդները, ինչպէս տեսանք, այդ շրջանին Տփլիս ընտրած են իրենց բնակութեան վայր (Հմմտ. Բաղմ. 1956, էջ 108—109):

Թէթէոս Աշտարակեցի Գօլօշեանցի կը յաջորդէ Աբրահամ Թէֆիքտաղցի 1777ին Հերակլ թագաւորին հրամանով-զանիկա «Հա-ճեցուցեալ էր երեւելի ընծայիւք» (Բաղմ. 1956, էջ 109 եւ Թ. 239, էջ 135—137): Ձեռներէց է եւ իր անունը կ'ուզէ որ ապագայ սերունդը օրհնութեամբ յիշէ, ուստի եւ երեսուն տարի անխնամ մնա-ցած եւ հետեւաբար շատ վնասուած վանքը կը ցանկայ վերանորոգել, մանա-ւանդ որ ժամանակն ալ նպաստաւոր էր, «Քանզի ի նմին ժամանակի նուազեալ էին արշաւանք եւ ասպատակութիւնք» (անդ էջ 109): Նորոգութեան համար կը գոր-ծածէ ժողովուրդէն ստացած նպաստները եւ իր անհատական սեպհական դրամները, բայց անոնք շուտ կը սպառին եւ դրամի կարիքը զինքը կը նեղէ եւ քանի մը ծրագիրներու գործադրութեան արգելք կ'ըլ-լայ: Ան «Ձեռն ի գործ առնէ եւ չինէ զկրկնայարկ առաջնորդարան զեղեցիկ ի հիւսիսակողմն նշխարատան հարուստ մի բացառոյն առ որմով հնագոյն սեղանա-տանն ... եւ զայլ սենեակս ինչ յայլեայլ պէտս:» Ապա դրամի պակասութիւնը զինքը կը ճնշէ եւ «Սկսաւ որոնել զպահարանս եւ զամենայն վայր եւ անկին բանալով եւ քանդելով առ ի գտանել զպահարան ինչ երեւելի, թագուցեալ ի ժամանակէ անտի Սուրկունեան Գրիգորի, բայց ոչինչ կամ սակաւ ինչ շահէր անդուստ եւ ոչ որպէս ակն ունէր, բաւական ինչ յօժան-դակութիւն գործոյն:» (անդ էջ 109): Անոր փնտռումներուն կ'օժանդակէ իր Պետրոս սարկաւազ փոքրաւորը, որ ազահ ըլլալով եւ ճարպիկ, «Մոլեալ ի սէր զանձուց եւ առաւել քան զվարդապետ իւր վառեալ ի խնդիր նոցա, ոչինչ վայր եթող, զոր ոչ բրեաց եւ ոչինչ շինուած, զոր ոչ խախտեաց, որոց խախտուածք երեւին մինչեւ ցայսօր» (անդ էջ 109):

Երանի՛ թէ այսքանն ըլլար անոր անկուշտ ազահութեան վնասը: Շարունակեմք ցաւով. «Այլ ոչինչ օգտեալ ձեռն արկանէ ապա ի բազմադարեան պահարանն կամ ի քարայրն դրոց եւ մատենից ուխտիս ուր կայ յարեւմտից մենաստանիս ... բացա-դոյն ի վանացս իբրեւ քառորդիւ ժամու, յորում էին ըստ պատմելոյ ականատեսից անհամար գրչագիր եւ երկաթագիր հնա-գոյն եւ ընտիր մատեանք մեծամեծք եւ փոքունք ի յորով դարուց ժողովեալք, թող զմատեանսն որք կային ի վերնախո-րանս եկեղեցւոյն սրբոյն Գրիգորի եւ զան-գակատանն: Այս այն քարայր է, առ որ յաճախէր միշտ Յովհաննէս սարկաւազ վարդապետն յընթերցումն դրոց, որպէս գրէ Կիրակոս ի վարս նորա: Եւ ահա զայնչափ բազմութիւն մատենից, չգիտեմ յինչ պատճառս Աբրահամ վարդապետ ամսօրեայ ժամանակօք աշխատեալ ընդ սար-կաւազի իւրում, բովանդակ ի վայր իջու-ցանէ եւ բերեալ աստ ի վանքս դնէ ի ներքնայարկն զանգատան եւ յոչ բաւեալ տեղոյն զբովանդակն տանել, ընդ եւ յայլ զանազան տեղիս ի խորանս եւ ի մատրուս, յորմէ օր ըստ օրէ պակասեալ ցրուեալ եւ յափշտակեալ ի գողոց եւ յա-մենեցունց, որոց միանգամ հասին ձեռք. այժմ եւ ոչ տեսրակ մի ի նոցունց երեւի ի միջի չգիտեմ թէ զիարդ կորեան կամ անհետ եղեն այնչափ անհամար մատեանք, մանաւանդ ստուարագոյնքն ի նոցանէ եւ առաւել մեծամեծքն: Ասի յականատեսիցն թէ վերոյիշատակեալ Պետրոս սարկաւազ զհոլովս ի մատենից անտի, որ փտեալք էին ըստ մասին կամ ցրուեալ ի թերթս թերթս եւ ի տետրակս, ժողովեալ առհա-սարակ հանդէպ զանգատան իբրեւ տան կամ երկոտասան ոտնաչափ թանձրու-թեամբ, հուր էարկ եւ այրեաց զամենայն իբրեւ զանպիտանս» (անդ էջ 109—110, Հմմտ. նաեւ Արարատ 1887, էջ 68—69):

Սիմէոն կաթողիկոսի մահուան եւ Ղու-կաս կաթողիկոսի յաջորդութեան ժամա-նակաշրջաններու Աղուաններուն խորայն կաթողիկոսը «պարագաներէն օգտուելով կանցնի Հաղբատ — գաղտնի դիտաւորու-թեամբ «զնա — Հաղբատ — ինքեան տեղի բնակութեան» ընելու (Դիւան Դ. էջ 17 եւ 39): Եւ իր նապատակին կը հասնի որոշ

զիջումներով. Բայց Գիօրկի Միրզա արքայորդին Ղուկաս կաթողիկոսին կը ներկայացնէ Դաւիթ Թիֆլիզցի վար-դապետը փափաքելով որ զանիկա Հաղ-բատի վրայ եպիսկոպոս ձեռնադրէ: Ղու-կաս կը հաւանի, սակայն պահանջելով Խորայէլի²² մեկնումը: Գիօրկի Միրզա իր խնդիրը կը կրկնէ եւ իջմիածնի հայրա-պետը անոր «խաթեր» համար Դաւիթ վարդապետը եպիսկոպոս կը ձեռնադրէ եւ Հաղբատի առաջնորդ կը նշանակէ: Դժբախտաբար անիկա արքայորդւոյն իր վրայ դրած յոյսերը չարդարացներ եւ իբրեւ վարձկան «ի յառնել Լէզկեացն» վանքը կը պարպէ եւ մինչ այդ ատենները քայքայուած ու վնասուած ուրիշ վանքեր կը վերաշինուին, անիկա այլուր կ'անցնէ իր օրերը: Բնականաբար Ղուկաս կաթո-ղիկոսը եղածէն դժգոհ՝ «զԴաւիթ սեւազ-լուին եւ զԻրր արեղայն» իր կարգէն կը լուծէ (անդ էջ 579—583): Բայց յետոյ Հերակլի բարեխօսութեան ունկնդիր՝ զինքը առաջնորդութեան մէջ կը վերա-հաստատէ, միայն թէ «Իբրեւ պատիժ եր-կու տարի եպիսկոպոսական իշխանութեանէ կը կախակայէ (անդ էջ 588—591): Կը ցանկայ որ վանքն ու իր թեմը վերստա-նան իրենց նախնական «բարեկրօն եւ բարեկեցիկ» վիճակը եւ Դաւիթ ալ երկու տարիէն ընդունի «Դարձեալ զպատիւ եպիս-կոպոսութեան իւրոյ» (անդ 590—591 եւ Հմմտ. Թ. 239, էջ 137—142):

Դաւիթ դժբախտ առաջնորդ կ'ըլլայ քաղաքական անհաճոյ դէպքերու պատճառ-ներով եւ կը մեռնի 1796ին (Թ. 239 էջ 142):²²

Ղուկաս Կաթողիկոսէն Դաւիթի յաջորդ կը նշանակուի ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱԼ-ԱԼԵԱՆՑ որ Աղուանից Յովհաննէս կաթո-ղիկոսին կրտսեր եղբայրն էր եւ Խորայէլ կաթողիկոսին ալ ազգական (Դիւան Դ. էջ 6677—6696 Թ. 239 էջ 142): Անիկա «Եկաց յառաջնորդութեան ամս ութ, յորս վերա-նորոգեաց գերկոսին այդիս վանացս, որ ի Հաղբատաձոր, որք էին աւերեալք եւ ամայացեալք» (Թ. 239 էջ 143): Նաեւ

²² Յովհ. Ղրիմեցի կը գրէ թէ ականատեսնե-րու վկայութեան համաձայն «Խորայէլ էր ըստ հա-ն-գամանաց անձին բարձրահասակ, փառահեղ, եւ զե-ղեցկազմ, այլ եւ վեհանմն, քաղցրախօս եւ առա-տաճեռ» (Թ. 239, էջ 139):

Հաղբատի կալուածական իրաւունքները կը պաշտպանէ Ջալալէի ոսոճութիւններու դէմ (անդ էջ 48, հմմտ. եւ վարը):

Սարգիսի յաջորդ կ'ըլլայ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԿՆՑԻ արքեպիսկոպոսը, որ նաեւ առաջ-նորդ էր «Հայոցն Վրացտանու սահմա-նացն» (Դիւան Դ. էջ 605): Անոր հսկո-ղութեան տակ Գրիգոր վարդապետը կը ձեռնարկէ վանքին վերաշինութեան (եւ որ սակայն նախապէս դովելի գործունէութիւն չէ ցուցաբերած, Դիւան Դ. էջ 545—546, 579, 605 եւ Դիւան Զ. էջ 108—111):²³

Յովհաննէս որ էր «Այր հանճարեղ, մեծազործ եւ առատաձեռն», կոչուած է «Կենդանի նահատակ»: Հաղիւ երեք տարի առաջնորդութիւն կ'ընէ մեռնելով արդէն 1811ին, սակայն «ի սակաւ միջոցի անդ փոյթ մեծ կալեալ նորա պայծառացուցա-նել զայս ուխտ ձեռն էարկ եւ վերանորո-գեաց զգլուխ վերնայարկի զանգակատանն, որ քանդեալ կայր ի վաղուց ի դադարեալ նորա կանգնեալ զխաչ զեղեցիկ եւ փառա-ւոր: Շինեաց եւ զանգակարան փոքրիկ ի դուխ արեւմտեան մեծ դաւթի աւագ տաճարին, որ ըստ բոլորովին քանդեալ: Երաց ճանապարհ սայլի մեծ ծախիւք ընդ ծոցն Խրամաձորոյ մինչեւ ի գետն Սե-աւորդաց ձորոյն, որ այժմ կայ խափա-նեալ առ անխնամ մնալոյ» (Թ. 239 էջ 144):

Նկատողութեան արժանի են Դանիէլ կաթողիկոսին Յովհաննէս արքեպիսկոպո-սին զրաւ սա տողերը «Յորժամ առաքես-ցուք զկոնդակ առաջնորդութեան Հաղ-բատայ վիճակին նոր իմն թուի սոյն առաջ-նորդութիւն եւ իրանն նոր է, քանզի եւ նորոգութիւն բարձրագոյն խորհրդարանի նոր է եւ վասն բարուք կառավարութեան նորագունից պէտք են, զի հինն օրըս-տօրէ նուազեալ յետին աստիճան խան-գարման էած ոչ միայն զսուրբ վանն Հաղբատ, այլ եւ զսուրբ կաթողիկէն իջ-միածին» (Դիւան Ե. էջ 584): Միեւնոյն Դանիէլ կ'օրհնէ ու կը զովէ Ջալ Դա-ւիթեան Բարաթով եւ անոր կիներ, զի Հաղ-բատի վանքի նորոգութեան եւ պայծառու-թեան ձեռնարկած են (անդ էջ 545—546, հմմտ. եւ էջ 583—584):

²³ Գանձասարի Սալիս կաթողիկոսը ժամանակ մը Հաղբատի առաջնորդութիւնը կը վարէ (Բաֆֆի, Խամսայի մեկնութիւնները, էջ 223):

«Աստուածատուր արքեպիսկոպոս Ար-
ձախոյ, ձեռնասուն աշակերտ Ղուկաս կա-
թողիկոսի յետ մահուն Յովհաննու առա-
քի ի տեղի նորա յեփրեմայ սրբազնա-
սուրբ կաթողիկոսէ առաջնորդ Հաղբատայ
եւ Տփլեայ» (Թ. 239 էջ 145) Բայց հա-
զել երկու տարի պաշտօնավարած՝ նոյն
կաթողիկոսէն կը յղուի Պոլիս, ուսկէ
վերադարձին 1824ին էջմիածնի մէջ կը
մեռնի եւ փառաշուք յուղարկուուրութիւն
կ'ունենայ: ²⁴

Աստուածատուրի հեռանալէն յետոյ
Ներսէս արքեպիսկոպոսն Աշտարակեցի
«Յազէ կամարականաց առաքի ի նոյն
սրբազնապոյն կաթողիկոսէ առաջնորդա-
կան պարտաւորութեամբ ... ի թուականի
Հայոց ՌՄԿԳ յամի Տեառն 1814 յամսեան
Փետրվարի: Եւ սա կայ այժմ եւ վարէ
դառնորդական տնտեսութիւն ինքեան
յանձնեալ արեական քաջարթուն ղիտողու-
թեամբ» (Թ. 239 էջ 146): Կը ձեռնակէ
«Ի նորոգութիւն եւ բարեկարգութիւն
սորին մենաստանի», զլիաւորարար տանիք-
ներու նորոգութիւնը զինքը կը զբաղեցնէ
ինչպէս արտաքին պարիսպին ընդարձա-
կումը: Լայն խորհուրդեան եւ ուժեղ
կամքի տէր անձ՝ կը ծրարէ շատ բան
ընել, բայց 1827ին յանկարծ ծագած պա-
տերազմը իր ձեռքերը կը կապէ եւ կը
ստիպուի սպասել անոր աւարտումին:
Անոր առաջնորդութեան իններորդ տարին
Եփրեմ կաթողիկոսը Հաղբատ կու գայ,
«ուր առաւել քան զամս չորս» կը մնայ
(Թ. 239 էջ 147—150, ուր եւ պատերազմի
ընթացքին մասին մանրամասն տեղեկու-
թիւններ):

Ներսէս Աշտարակեցիի առաջնորդու-
թեան շրջանին Հաղբատի մէջ ապրած է
Յովհաննէս Սուրէնեան Ղրիմեցի, որ իր
ժամանակը կ'օգտագործէ պրպտումներ
ընելով եւ Հաղբատի պատմութիւնը գրե-
լով: Ան առեւտրապիւրն եղած է Եփրեմ
կաթողիկոսի եւ ապա Նոր Զուղայի Ամե-
նափրկի վանքի առաջնորդը:

²⁴ Հմմտ. Ստ. Օրբէլեանի Պատմութեան (Ղու-
կասեան հրտ.) Յանդուածը էջ 539: Եփրեմէ յառաջ
եւ վերջ Հաղբատ կաթողիկոսական այցելութեան ար-
ժանացած է — Սանահինի հետ (Հմմտ. Արքա-
կաթողիկոսի Կրեւանցոյ Պատմագրութիւն անցիցն
իւրոց... վաղարշապատ 1870, էջ 26):

Երզնկեան «Արարատի» մէջ վերջին
դարերու առաջնորդներու անուանացանկը
կու տայ այսպէս՝ Ղուկաս կուսակրօն
վարդապետ ի թուին Հայոց Ռ, Կիրակոս
եպ. Հաղբատայ 1629, Բարսեղ արքեպ. թու-
մանեանց 1668, Աւետիս արքեպ., նո-
րոգող պարիսպի եւ կաթողիկէի Աբրա-
համ արքեպ., Հերակլի օրով վանքը կը
պայծառացնէ, Դաւիթ արքեպ. Խէրողին-
եանց որ կը նստի Թիֆլիս եւ 1779ին կը
մեռնի, Սարգիս արքեպ. Կախէթի, ի
թուին 1800, Զաքարիա Ծ. վարդապետ
1810), Զաքարիա արքեպ. Գուլասպեան
(անդ 1887, էջ 264—265, հմմտ. Արձ. Թ.
25):

Հարեւանցի ակնարկ մը կը ցուցնէ
թէ որքան թերի է այս եւ նաեւ բաւական
տարբեր:

Զաքարիա արքեպիսկոպոսը Բէհրու-
ղեան տոհմէն է եւ զբաղած է նաեւ գրե-
լով: Անոր գրչէն են Քարողգիւրք, Վէպ
Սեւանայ եւ ուրիշ երկեր ²⁵ տես Հաղբատի
գալորոցը: Անոր մահէն վերջ ըստ նոր
կանոնադրութեան Հաղբատի եպիսկոպո-
սական թեմը կը ջնջուի եւ կ'ըլլայ լոկ
վանահայրութիւն, այս է վանահայրը իշ-
խանութիւն կ'ունենայ միայն վանքի միա-
բաններու եւ դոյքերու վրայ, բայց այս
ալ ժամանակաւոր կ'ըլլայ — աւելի ճիշդը
փոփոխական՝ պարագայներու պատճառով:
Այդ տեղի կ'ունենայ 1836ին (հմմտ. Արա-
րատ, 1887, էջ 265 եւ 1888 էջ 76):

²⁵ Հաղբատի մէջ 1827ին կը գրուի Տաղարան մը
(Սեւանեան Հ., Յուց. Հայ. Զեռ. Նոր Բայազէտի,
Վիեննա 1924, էջ 52): — Զաքարիա Գուլասպեանի
չիմին վրայ արձանագրած է:

«Էին անեղին ժիւ պաշտօնակիր
Տէր Զաքարիա րարուն անպատիր,
Հովիւ քաջակիր ձիւնայ իւր ընտիր,
Արքեպիսկոպոս էջմիածնի ձիւն:
Քարող սուրբ տառից անխոնջ անձանձիր
Փառաց Արամեանց յար խուզանդիր
Զարմին Գուլասպեանց վեհ արձանագիր
Տոհմին Բեհրուտեանց ոստ վայելչադիր
Այլ ահ եւ աւագ տունկը բարեգիր
Զիարդ զօսացար մորչ սաղարթակիր
Իններեակ հնգիւր ախօք ծաղկածիր
Ելեր ի կենացս կեանս յանախտակի
Յետնորդք յարգութեամբ ելցեն ի խնդիր:
Աւագ զի յարգեացս յանգէտս կացիր
Ողորմ անդադար հեծէ վշտակիր
Ծառայ քո Գրիգոր եւ կըրպար կրտսեր
Այլ եւ աղեխարչ դառն արտուստար
Ընծայէ զրուագս եւ զեղբարդիր:

Ի 1835 ամի Յունիսի 5 աւուրն» (Ազգ. Հանդ. 1901, է—Բ, էջ 410):

Հաղբատի առաջին վանահայրը կ'ըլլայ
Եփրեմ Ծ. վ. Երզնկեանց, որ դայն կը
չէնցնէ, ապա իրարու կը յաջորդեն Պե-
տրոս վ. Շիւղեցի, Աստուածատուր վ.
Շիւղեցի, Յարութիւն վ. Վախրաբեանց
Օձնեցի, Մովսէս վ. Մաղաթեան, Թադէոս
վ. Յալոքեանց Ախալցխեցի, Յովհաննէս
Բ. Երզնկեանց, Հաղբատացի, Առաքել վ.
Քարուանքեցի, Յովսէփ վ. Խարազեանց,
որ թէեւ նոր սենեակներ կը շինէ ու դպրոց
ալ կը բանայ, բայց անհոգ առաջնորդ
եղած է. «Իւր վերին աստիճանի անփու-
թութեան շնորհիւ նա քայքայել է վանքի
հնութիւնները. գիւղացիները օգտուելով
նրա թուրութիւնից, տարել են դարաւոր
չինութիւնների սրբատաշ քարերը եւ իրանց
տները վրայ դործ դրել: Մի քանի խըր-
ճիթների ճակատներում մենք տեսանք
մինչեւ անգամ գեղեցիկ քանդակադործու-
ած խաչերի եւ զանազան պատկերների
բեկորներ» (Արձագանք 1888, էջ 571):
Անոր յաջորդը կ'ըլլայ Գեղամ վարդա-
պետը (անդ էջ 571): Շինարար առաջնորդ
եղած է ՍԵՐՈՎԲԷ ԵՊ. ԱՐԱՐԱՏԵԱՆ, որ
1873ին Դէպէզի վրայ կամուրջ մը երկնցը-
նել կու տայ (Արարատ 1887, էջ 265):
Ասոնք եւ ասոնց յաջորդներէն ոմանք,
որոնց անուանաւորքը հոս յառաջ չենք
բերեր, երբեմն աթոռէն հեռացած կամ
հեռացուած են եւ վերստին եկած ու բազ-
մած են անոր վրայ: Չեն ունեցած
ակնբախ դործունէութիւն: Թէեւ ժամա-
նակ մը էջմիածնի կաթողիկոսութիւնը
մտածած է Հաղբատ վանահայր առաքել
Ղաղարոս Աղայեան, որ ուղած է վար-
դապետ ըլլալ, սակայն անիկա մերժած
է Գուգարքի մէկ անկիւնը պաշտօնավարել
(Արձագանք 1888, էջ 571): Մինչ Դաւիթ
առաջնորդի օրով Հաղբատի մէջ կ'առանձ-
նանայ Սայեաթ Նովա, որ 1795ին կը
նահատակուի (Հայ Նոր Վկաներ, էջ 616
— 618 եւ Ակոս 1957, Թ. 12 էջ 53):

Իրբեւ լրացուցիչ եւ կարեւոր յաւե-
լուած հոս կը գետեղեմ Յովհ. Ղրիմե-
ցիի՝ ²⁶

«Պրակ առանձին

²⁶ Առաջնորդներէն Նորատուեկեան վարդա-
պետը կը սպաննուի (Նոր Դար 1896, Թ. 153): Արամ-
դաբեանի մասին հմմտ. Երեցեան, Կովկասի Հայք,
էջ 650—651):

Միահաղոյն ի մի վայր շարակար-
գութիւն առաջնորդաց Հաղբատայ:

Կարգ անուանց առաջնորդաց ուխտիս
յընթացս ճառիդ գորով մասնատեալ եւ ի
զանազան գլուխս ցրուեալ, պատշաճ դա-
տեցաք աստէն յայս պրակ ի մի վայր
շարակաւ զնոսին, զի իրր յամփոփ ինչ
տեսարանի միանգամայն երեւեցին յան-
դիման աչաց. եղեալ հանգէպ իւրաքան-
չիւրոցն զթուականս նոցին եւ դամս ըստ
կարգի:

Ա. ՆՊ—991 Սիմէոն առաջին վանա-
հայր, որոշի յառաջնորդութիւն Հաղբատայ
ի խորովանոյշ թագուհոյ անդէն ի սկիզբն
կամ յընթացս հիմնարկութեան ուխտիս,
որոյ անմիջական հոգաբարձութեամբն իսկ
աւարտի շինութիւն սուրբ Նշան աւագ
տաճարին ի սմին ՆՊ թուականի Հայոց,
յորմէ եւ անդր հաշուեալ ամք առաջնոր-
դութեան նորա համարին չորեքտասան,
իսկ ի հիմնարկութեան անտի կամ իսկզ-
բանէ շինութեան տաճարին առաւելուն
ամք նորա ցըտասուն եւ անդր:

Բ. ՆԾԷ — 1008 — Յովսէփ երկրորդ վա-
նահայր յաջորդէ Սիմէոնի, ամ յաջորդու-
թեան անյայտ յիշատակի ի միում եւեթ
արձանագրի ընդ թուականաւ ՆԾԷ, զորմէ
տես ի գլ. ԺԵ:

Գ. ՇԼԱ — 1082 — Սարգիս Ա. ձեռնադրի
եպիսկոպոս եւ նստի առաջնորդ ի սմին
ՇԼԱ թուականի, յորում ժամանակի այս
ուխտ հաստատեցաւ լինել աթոռ մեծ եւ
արքեպիսկոպոսանիստ, յայտնի ամք առաջ-
նորդութեան սորին ի թուականէ անտի
ձեռնադրութեան նորա եւ անդր երեւին
եօթն կամ ութ, յայլ յամացն անյայտ:

Դ. ՇԶ — 1121 Յովհաննէս Ա. յի-
շատակի ի տապանագրի իւրում որպէս եւ
յայլում միակ արձանագրի ընդ թուակա-
նաւ ՇԶ. որոյ վերջին թուագիր է եղծեալ,
տես ի նոյն ԺԵ. գլ.:

Ե. ՈԺԵ — 1166 — Գէորգ, յիշատակի ի
տապանագրի իւրում միայն է առանց թու-
ականի, իսկ յայլ արձանագրի չի գտնանէ
յիշատակութիւն, այլ ի պատմութիւնս յի-
շատակի թղթակցութիւն նորա ընդ Շնոր-
հաւոյն Ներսիսի չուրջ զթուականաւ ՈԺԵ
եւ ի ՈԻԲ թուին պատմի արարեալ ի
նմանէ մեկնութեան Եսայեայ մարգարէու-

Թեան, ըստ որոյ յայտնիքն յամաց առաջ-
նորդութեան նորա երեւին եօթն կամ
ութ:

2. ՈՒԲ - 1179 - Բարսեղ Ա. յաջորդէ
Գէորգայ. գտաւ ի մեծ ժողովն Հռոմկ-
լայու որ եւ ասի ժողով Տարսնի, որ
եղեւ ի Թուին ՈՒԲ եւ յարձանագիրս յի-
շատակի առաջնորդութիւն սորա մինչեւ
ի Թուականն ՈՒԲ ցամն Տեառն 1189, ըստ
որոյ յայտնիքն ամաց առաջնորդութեան
նորա ինն կամ տասն, այլ թէ ո՞րչափ
են ամք նորա նախընթացք եւ հետեւորդք
անյայտք:

3. ՈՒՆ - 1196 - Յովհաննէս Բ. իս-
չենցի, յաջորդ Բարսղի ի սմին ՈՒՆ Թու-
ականի առաջնորդ Հաղբատայ գոլով գտաւ
ի հանդիսի նաւակատեաց աւարտման շինու-
թեան Գետկայ սուրբ Աստուածածնոյ եկե-
ղեցոյն, որպէս պատմէ Կիր(արակոս),
զորոյ զբանս տես ի գլ. ԺԵ.:

Ը. ՈՒԴ - 1205 - Գրիգոր Ա. որդի
Տուտայ իսչենցոյ, յաջորդէ ի տեղի
Յովհաննէս վտարեալ զնա յաթոռոյ իւրմէ,
ամ յաջորդելոյն անյայտ, այլ ի սմին
ՈՒԴ. Թուականի գոլով առաջնորդ Հաղ-
բատայ գտաւ ի ժողովն զոր գումարեաց
Ձաքարէ սպասալար ի Լօսի եւ ի ՈՒՆ
Թուին խոյս ետ յաթոռոյն. տես ի գլ.
ԺԶ.:

.. ՈՒՆ - 1206 - Յովհաննէս իսչենցի,
երկրորդ անգամ կարգի առաջնորդ յետ
փախստեան Գրիգորի, ի սմին ՈՒՆ Թու-
ականի. ամք առաջնորդութեան նորա յայս
նուագ երեւին չորեքտասան կամ հնգետա-
սան ըստ արձանագրաց. ամք նորա վեր-
ջին անորոշք:

Թ. ՈՒԶ - 1227 - Յովհաննէս Գ. քեռորդի
իշխանացն Ձաքարէի եւ Իւանէի, յաջորդէ
զաթոռն զինի իսչենցոյն. ամ յաջոր-
դելոյն անյայտ, ի սմին ՈՒԶ Թուականի
յիշատակի առաջնորդութիւն նորա յար-
ձանագրի իւրում ի Սանահին, եւ ի ՈՒԲ
Թուին, յամի 1233 շինեաց զբերդն Կայանոյ,
ըստ որոյ յայտնին չորեքտասան ամք առաջ-
նորդութեան նորա առաջին եւ վերջին ամք
նորա անորոշք:

Ժ. ՈՒԱ - 1242 - Համադասպ Անեցի իշ-
խանագնեայ, յաջորդ Յովհաննէս երրորդի,
յիշատակի առաջնորդութիւն սորա ի բազում
արձանագիրս սկսեալ ի սմին ՈՒԱ Թուականէ

մինչեւ ցՈՂԸ ցամն Տեառն 1249 եւ Կիրակոս
ի Թուին ՈՂԹ, յիշատակէ զնա եպիսկոպոս
Հաղբատայ ըստ որոյ ամք առաջնորդութեան
նորա երեւին ութ կամ ինն:

ԺԱ. ՈՂԹ - 1250 - Յովհաննէս Դ. յազգէ
Բաղբատունեաց, յաջորդէ զաթոռն զինի Հա-
մադասպայ ի ՈՂԹ կամ ի Զ Թուականին, ամք
առաջնորդութեան նորա երկու, ըստ որում
զնէ Կիրակոս, որպէս եւ յարձանագրացն
յորս Համադասպ յիշատակի, յայտնի երեւի:

ՉԱ. - 1252 - Համադասպ զարձեալ,
զինի Յովհաննէս Բաղբատունեայ նստի
առաջնորդ ի սմին ՉԱ կամ ԶԲ Թուա-
կանի, առաջնորդութիւն նորա յայս նուագ
յիշատակի յարձանագիրս սկսեալ ի վեր-
ջին Թուականէ մինչեւ ցՉԶ, ցամն Տեառն
1257, ըստ որոյ ամք նորա համարին իբր
հինգ:

ԺԲ. ՉԶ - 1257 - Յովհաննէս Ե. Ար-
մանցի, յաջորդէ զաթոռն յետ Համա-
դասպայ ի Թուի ՉԶ. յիշատակի յարձա-
նագիրս առաջնորդութիւն սորա սկսեալ ի
ՉԷ Թուականէ մինչեւ ցՉԻԲ, ցամ Տեառն
1273, իսկ եւ անդր մինչեւ ցԹուականն ՉԽԳ
ցամն Տեառն 1294 յիշատակի ի պատմա-
գիրս, ըստ որոյ ամք նորա ձգին ցերեւուն
եւ վեց. վերջին ամք նորա անյայտք են:

ԺԳ. ՉԽԶ - 1307 - Ղուկաս եւ Աստու-
ածատուր, յիշատակին ի միում եւեթ
արձանագրի եւ այն է առանց Թուականի,
իսկ Ղուկաս երեւի եւ յայլում արձա-
նագրի ընդ Թուականաւ ՉԽԶ, ամք սոցա
անյայտք:

ԺԴ. ՊԽԴ - 1395 - Յովհաննէս Զ.
յիշատակեալ միայն ի տապանագրի
իւրում ընդ Թուականաւ ՊԽԴ. յաջորդ
սորա եւ նախորդ եւ ամք առաջնորդու-
թեան անյայտք:

ԺԵ. ՊԶ - 1441 - Գրիգոր Բ. զամանէ
չիք ամենեւին յիշատակութիւն յարձանա-
գիրս, այլ ըստ ցուցանելոյ պատմութեանց
ի սմին ՊԶ Թուականի գոլով առաջնորդ
Հաղբատայ գտաւ ի մեծ ժողովն յայն
գումարեալ ի սուրբ Էջմիածին վան
նորդութեան այնր աթոռոյ. յաջորդ սորա
եւս եւ ամք առաջնորդութեան անյայտք:

ԺԶ. ՁԽ - 1491 - Պետրոս, յիշատակի
միայն ի տապանագրի իւրում առնթեք
զանգակատան ընդ Թուականաւ ՁԽ,

սորայն եւս յաջորդ եւ ամք առաջնորդու-
թեան անյայտք:

ԺԷ. ՌԼԵ - 1586 - Մատթէոս, յիշա-
տակեալ մի միայն արձանագիր ընդ Թու-
ականաւ ՌԼԵ իսկ յայլ արձանագիրս
չերեւի յիշատակութիւն զնմանէ եւ ոչ իսկ
ի պատմութիւնս. ուստի եւ ամք նորա
անյայտք, յաջորդն հնար է թէ իցէ Կիրա-
կոս:

ԺԸ. ՌՀԸ - 1629 - Կիրակոս, եւ սա
միայն ի տապանագրի իւրում յիշատակեալ
ընդ Թուականաւ ՌՀԸ, ամք նորա ան-
յայտք, նոյնպէս եւ յաջորդն:

ԺԹ. ՌՃ - 1651 - Աւետիս, յիշատակի
ի կրկին արձանագիրս ի Թուին ՌՃ եւ
ՌՃԴ, այլ եւ ի տապանագրի իւրում ի
Թուին ՌՃԻԶ ըստ որոյ ամք առաջնոր-
դութեան յառաջնոյ Թուականէ հաշուեալ
երեւին առ առաւելն քսան եւ վեց, իսկ
ամք նորա նախընթացք քան զՃԹ Թուա-
կանն անյայտք:

Ի. ՌՃԻԶ - 1677 - Բարսեղ Բ. յազգէ
Թումանեանց Մամիկոնեան, յիշատակի յար-
ձանագրի իւրում ընդ Աւետիս եպիսկոպոսի
եւ ի տապանագրի իւրում առանձինն ի
Թուին ՌՃԾԲ յամի Տեառն 1703. Ժամա-
թուին ՌՃԾԲ յամի Տեառն 1703. Ժամա-
նակ առաջնորդութեան սորա որոշակի զնի
ի տապանագրի անդ նորին, որ են ամք
քսան եւ եօթն, ի մահուանէ անտի Աւե-
տիսի:

ԻԱ. ՌՃԾԳ - 1704 - Թովմայ, յազգէ
Թումանեանց զարձեալ, համարի յաջոր-
դեալ յետ Բարսղի ի Թուին ՌՃԾԳ եւ
կացեալ յառաջնորդութեան ամս իբր եր-
կոտասան:

ԻԲ. ՌՃԿԵ - 1716 - Գրիգոր Գ. ի
Տփիսեաց, Սուրկունեան մականուանեալ,
համարի յաջորդեալ Թովմայի ի Թուին
ՌՃԿԵ, իսկ ի ՌՄ Թուին, յամի 1751
վախճանի, կացեալ յառաջնորդութեան ամս
երեսուն եւ հինգ:

ԻԳ. ՌՄԱ - 1752 - Ձաքարիա Պաթի-
նեան, ի Տփիսեաց, համարի ի սմին ՌՄԱ
Թուականի յաջորդեալ զինի Գրիգորի,
վախճան կենաց նորա ի Թուին ՌՄԺԹ
յամի Տեառն 1770 ըստ որոյ ամք առաջ-
նորդութեան նորա հաշուին իբր տասն
եւ ութ:

ԻԴ. ՌՄԻ - 1771 - Ռէթէոս Աշտարակեցի
Գօլօշեան, նուիրակ սրբոյ Էջմիածնի

ի Տփիսիս յետ մահուն Ձաքարիայ վարէ
զառաջնորդութիւն ուխտիս ամս իբր հինգ
եւ ապա դարձ առնէ ի սուրբ Էջմիածին
եւ անդ վախճանի:

ԻԵ. ՌՄԻԶ - 1777 - Աբրահամ Թէ-
քերտաղցի, յետ գնալոյ Ռէթէոսի առնու
զառաջնորդութիւն Հաղբատայ ի Թուին
ՌՄԻԶ եւ կացեալ ի նմին ամս իբր երեք
զնայ ապա ի Սանահին եւ անդ նստի
առաջնորդ:

ԻԶ. ՌՄԻԹ - 1780 - Իսրայէլ յազգէ
Ձալալեանց, որ եղեւ կաթողիկոս Աղու-
անից, առեալ զառաջնորդութիւն ուխտիս
ի Թուին ՌՄԻԹ եկաց ի նմին ամս իբր
չորս եւ ապա հրաժարեալ զնաց յաշխարհ
իւր յԱրձախ:

ԻԷ. ՌՄԼԳ - 1784 - Դաւիթ ի Տփիսեաց
Թաւէլդարով, յաջորդէ զաթոռն ի տեղի
Իսրայէլի ի Թուին ՌՄԼԳ եւ կացեալ
յառաջնորդութեան ամս իբր երկոտասան
վախճանի ի Թուին ՌՄԽԵ, յամի Տեառն
1796:

ԻԸ. ՌՄԽԵ - 1798 - Սարգիս Բ. Ձա-
լալեան, նախ առաջնորդ ի Թուին ՌՄԽԵ
եւ կացեալ յառաջնորդութեան ամս ինն իբր
թողու զայն եւ գնա(յ) յԱրձախ ի Թուին
ՌՄԾԷ:

ԻԹ. ՌՄԾԷ - 1808 - Յովհաննէս Ի.
Ակնցի, Գոլով արդէն առաջնորդ Վրաս-
տանայ Հայոց ի Տփիսիս առնու զառաջնոր-
տանայ Հայոց ի Թուին ՌՄԾԷ եւ
զութիւն Հաղբատայ ի Թուին ՌՄԾԷ եւ
միացուցանէ զվիճակ ուխտիս ընդ վիճակաց
եւ թեմից սրբոյ Էջմիածնի հաստատեալ
ընդ իշխանութեամբ միոյ առաջնորդի որ-
պէս եւ էր վաղագոյն եւ կեցեալ ամս
իբր երկուս յետ տիրելոյ առաջնորդութեան
սորին վախճանի ի Թուին ՌՄԿ՝ յամի
Տեառն 1811:

Լ. ՌՄԿԱ - 1812 - Աստուածատուր
յԱրձախոյ ձեռնասուն աշակերտ Ղուկաս
կաթողիկոսի յաջորդէ զառաջնորդութիւն
Հաղբատայ եւ Տփիսեաց յետ մահուն Յով-
հաննէս ի Թուին ՌՄԿԱ եւ յետ կալոյ
յառաջնորդութեան ամս իբր երկուս,
վերակոչի անդէն ի սուրբ Աթոռն ի
սրբազան Հայրապետէն ի Թուին ՌՄԿԳ
յամի Տեառն 1814 եւ առաքի գործով
ծայրագոյն նուիրակութեան ի Կոստան-
դինուպօլիս եւ յետ Ժամանակաց վերա-

դարձեալ ի սուրբ էջմիածին ի սմին 1827 ամի վախճանեցաւ անդէն:

Ա. 1814 - ՌՄԿԳ - Ներսէս արքեպիս- կոպոս Կամսարական յաջորդէ զառաջնորդութիւն զինի Աստուածատու ի թուին ՌՄԿԳ առաքեալ ի սրբոյ Աթոռոյ անտի յնի- բեմայ սրբազնասուրբ կաթողիկոսէ, որ եւ կայ այժմ, զգործ տեսչութեան ամենագլխատ արթնութեամբ վարելով եւ զբարեկարգու- թիւն սրբոյ Աթոռոյն ինքեան յանձն եղեալ զերահանձար խոհականութեամբ տնօրի- նելով, զորոյ զբաղմարդիւն կեանս հաճես- ցի Աստուած երկարաձգել եւ եւս ընդ հարուստ ամանակս յօգուտ եւ ի պարծանս կեղեցեալ իւրում սրբոյ ամէն: (Աւարտ պատմութեան Հաղորատայ, Թ. 239, էջ 156-162):

(Շարունակելի:)

Ն. Հ. ՈՍԿԵԱՆ
ՆՈՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻՐԻՍԵՐ ՊՈՐՊԵՐՈՍԻ
ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԻՆԶԵՆ ԵՐԵՐԵՅԻՈՅ
ԸՅԵՐԵՅԵԱՆ ԵՐԵՐԵՅԻՈՅ

(Շարունակելի:)

Ֆ. Լ. ՈՒՍԻՖ.
Նիքիտի Աստուածաբան արքեպիս- կոպոս մը անտես ընենք այս գետին ահուճքը Հայաստանի մէջ: Ասորիքի սահմա- նազուլը Ա. դարուն (յ. Ք.) վերջը՝ կը սկսէր Կոմագենեայ հիւսիսակողմէն, Նիւ- բուտ լեռան ստորոտը, ուր կանգնած են այն հոյակապ յիշատակարաններն, որ կառու- ցուած են ի պատիւ հնազոյն արքայից թոյս երկրին: Սակայն այս փոքրիկ երկիրը տե- սակ մը կղզիացեալ խորշ մը կը կազմէր, որ քիչ մը դէպի հիւսիս ինկած էր՝ Արեւելքէն դէպի Արեւմուտք տանող մեծ պողոտայէն, եւ Հոռոմայեցեաց եւ Պարթեւաց բնական ճա- կատապարհէն: Սակայն Հոռոմայեցիք ամրա- ցուցած էին անոր մերձավայրքը. Սամոսատ քաղաքը նիստն էր ԺՁ Փղաւեան Ամուր լե- գէնին, եւ գլուխն էր բաղմաթիւ գինուո- րական ուղիներու զծին:

«Այս երկրի մէջ, կը գրէր Մոլտքէ սպարապետը², հնազոյն ամրութիւնները կը կայանան երկարաձեւ լեռնակէ մը, զոր մարդկային ձեռքերը բարձրացուցած էին եւ որուն զագաթը կը զետեղէին զգեակը: Հա-

¹ Հմմտ. Humann und Puchstein, Reise in Klein-Asien und Nord-Syrien, Berlin 1890:
² v. Moltke, ԳԼ. Թրգմ. Lettres sur l'Orient, Paris 1872, p. 213:

բերաւոր այսպիսի լեռնակներ կան հոս, եւ ամէն գիւղ այս կերպով ամրացուած է: Այս արուեստական բլուրները յաճախ հսկայա- կան դործեր են. Սամոսատի բլուրը իբր 100 ոտք բարձրութիւն, 300 քայլ երկայնութիւն եւ 100 քայլ լայնութիւն ունի: Զառիպայր կողերը սալարկուած են կոփածոյ քարերով կամ դրուագուած պատով մը: Սամոսատի միջնաբերդը կանգնած էր մէջտեղը քաղաքին այն մասին, որ գետէն կը պատուէր³. Բոս մը կը կղզիացնէր զայն վերջինէս: Քաղաքէն բան մը մնացած չէ, բայց եթէ անոր հարա- լակողմը քանի մը կտոր պատեր, եւ հին շրջապատ պարսպին նշանը, որ լաւ տեսա- նելի է եւ որ բաւական մեծ հնութենէ մըն է (իբր Ա. դարէն⁴):

Սամոսատայ քով կա՞ր արդեօք մշտա- կան կամուրջ մը. անկարելի է որոշել: Սա- մոսատէն 2 ժամ, յետոյ երկուրեւկէս ժամ հեռուն դէպի արեւմուտք գտայ չինուածոց քանի մը որմախարիսներ, որոնք իմ օրա- գրութեանս մէջ այսպէս նշանակուած են. «Կրնայինք երկու չորեքուսի աշտարակներ ըսել՝ բայց շատ փոքրիկ, իբր երկու մետր կողմը: Մէկ մղոն անդին՝ Հայաս գիւղին քով՝ ստիպուեցայ թողուլ գետին ափունքը, որոնք շատ դժուարասէպ եղած էին, եւ որոնք որեւէ ճամբայ մը չեն ընծայեր. ան- տարակոյս ասկէ հետեւցնելու է թէ հնու- թեան մէջ որեւէ ուղի հոս գոյութիւն չու- նէր, եւ թէ այն ատեն արդէն ստիպուած էին, ինծի պէս, ներսերը խորամուկ ըլլալ՝ անցք մը գտնելու համար: Հայաս երեքուկէս ժամ հեռու է Տրուշէ. ասկէ կրնանք դար- ձեալ արեւելեան-հարաւարեւելք ուղղու- թիւնը բռնել եւ մէկուկէս ժամ ետքը շատ լաւ կը զանազանենք հին ուղւոյն մէկ կտորը, երեք մետր միջին լայնութեամբ, միահարթ երեսով, երկու կարգ աւելի ստուար քարերով իւրաքանչիւր կողման իբր ափնածիր: Քսան վայրկեան ետքն անձանա- չելի կ'ըլլայ այն, բայց յետոյ քարերու գիծը՝ որոնք ակներեւ կը տեսնուին թէ մարդկային ձեռք չարուած են, դարձեալ երեւան կու գան Նիքիտայ անմիջապէս մօտը Գեօկ- Սուէն անդին, Կիլիկ գիւղին դիմացը: Աւելի հեռուն ճամբան կ'անցնէր խորա- կողմը. որպէս զի գետին կազմած մէկ ծո-

³ Նիքիտայ քով մը հեռուն կ'անցնէ:
⁴ Տես Ման Բ, ԳԼ. Զ. ծն. 117:

ցին ի զուր տեղ հետեւելու չստիպուի. Զէկտէրիք խեղճուկ գիւղէն քիչ մը յառաջ ջրամբար մը՝ որ այժմ ցամաք է, փորուած է հողի մէջ գլխիվար ձագարի մը ձեւով⁵:

Հինկ գիւղէն մէկ ժամ երեք քառորդ հեռու եւ Սուպէրջուկէն 1 ժամ անդին՝ հանդիպեցայ աւերակ կամուրջի մը՝ ձգուած Արաֆ-սուի⁶ վրայ՝ որ հիւսիս-արեւելքէն զարով դէպի հարաւ-արեւելք կը հոսի: Առա- ջին կամարը վերէն փլած է, ինչպէս նաեւ հինգերորդը եւ յաջորդները, երկրորդին համարը շատ սրածայր կորուած է, եր- րորդը՝ քիչ մը աւելի նուազ, իսկ չորրորդը լիովին բոլորակամար է. անշուշտ միայն այս վերջինը կրնայ հոռոմեական ժամանակէ ըլ- լալ, միւսներն Արաբացիներէ նորոգուած կարկաստուած ըլլալով⁷:

Կամուրջէն ետքը դէպի արեւմուտք գրեթէ անմիջապէս կը սկսի հին ուղի մը, որ աջ կողմը դէպի հարաւ կը դառնայ: Իմ յուշատետրիս մէջ կը գտնեմ նշանակուած. «Կէս ժամ ետքը՝ խումը մը մղոնաքարեր⁸, ասոնց մէջ զոնէ երկու հատ կան որ շատ մեծ

⁵ Իմ յուշատետրէս կը քաղեմ հետեւեալը. «Ինծի ըսին թէ այն ձորին, զոր Զէկտէրիք մերձա- կայ ուղիւր փորած է, կողերուն վրայ աւերակներ կան, բայց այսօր պարզապէս ցանուցիւր քարեր եղած են: Հինգ գիւղի (որ շատ մօտն է) բնակիչները կը հաստատեն թէ Նիքիտայ միւս ափը՝ Բոզէր գիւղէն 1 քիլոմետր արեւելք կարելոր աւերակներ կան, յատ- կապէս կեղեցիկներ: Անկարելի էր գետն անցնել, զա- նոնք տեսնելու համար:
⁶ Տես ասոր լուսանկարը, զոր հրատարակած եմ ի «Tour du Monde» 1905, p. 160:
⁷ Իբրք ալ թէպէտեւ իւրաքանչիւրը կոփածոյ քարերով արտաքին դրուալ մ'ունի եւ պատի գան- զուածը խիպարով որմալիցք մըն է, ամէնուն համար, ի բաց առեալ միայն այս մին, զորմագրուած է բա- ւական փոքր քարասարուածք մը: Այս մին միայն հրա- շաղկով որմաղրուած է մանր խճաքներու յաւե- լումով. միւսներուն քարերն իրարու կապուած են ան- խառն հողով: Շինուածքին ստորոտը կմրոցածեւ (ար- խառն հողով) քանի մը քարեր: Հարաւ-արեւելեան տակարկատ) քանի մը քարեր: Կամուրջին կամարա- նման ուրիշ տեղ չի գտնուիր: Կամուրջին կամարա- նմանները բոլորովին հաւասար կ'երեւան, որոնց լայ- նութիւնը (հիւսիս-արեւմուտքէն դէպի հարաւ-արե- վելք) 4 մետր է. ասոր հակառակ կամարներու մեծու- լեւն անհասարկ է: Ասոնց միայն միոյն բացուածքը թիւնն անհասարկ է: Երկու ուրիշներ ալ, անտա- կըցայ չափել 5 մետր 50: Երկու ուրիշներ ալ, անտա- կըցայ անոր հաւասար էին, եւ կ'իլիւին գետահասար- անց բուն տեղւոյն վրայ, այսինքն այն գետամասին վրայ, որ շատ ցանցաւ կը ցամբէր: Այս երկուքին մէջտեղն էր, ինչպէս կ'երեւայ կամուրջին զագաթնա- կէտը: Նկատի առնելով երկու ծայրերն ալ գտնուող աւերուած մասերը՝ կամուրջը իբր 85 մետր երկայնու- թիւն մ'ունենալու էր: Լայնութիւնը 5 մետր 20: Կա- մուրջն ուղղադիւ չէր, այլ դէպի արեւելք կը թիւրքէր իբր քան աստիճան:

⁸ Ասոնց միայն հանդիպած եմ 1901 տարւոյ Ասո- րիքի հիւսիսակողմը կատարած ուղեւորութեանս ատեն:

են, չորեքուսի խարսխով, 2 մետր 25 սնդմ. երկայն: Մղոն մ'աւելի հեռուն՝ առ նուազն հինգ սիւներ⁹, նոյն տիպարով, եւ մէկ գին կարծեմ թէ կը տեսեմ փոքրիկ բոլորչի շի- նուածքի մը՝ որ իբր երկու մետր տրամա- զիծ ունի՝ որմախարիսները: Յետոյ յա- ջարդ մղոն մը կը կորսնցնենք. բայց չոր- րորդ մղոնին՝ բաղմաթիւ մղոնակոթոցներ՝ խորտակուած. ասոնք կ'երեւայ թէ զետե- ղուած են ճամբաներու խաչաձեւ հատման կէտին վրայ: Մղոնաքարերն անարձանագիր են, կամ անշուշտ տառերն անընթեանելի եղած են, քարերուն շատ գէշ տեսակին պատճառաւ, որոնց ամբողջ երեսը ծած- կուած է այնպիսի մեծ ծակերով որ մատը բոլորովին մէջը կը մտնէ: Մեծ աշխատու- թեամբ կրցայ այս մղոնաքարերէն մին շըբ- ջել տալ. կարծեցի ընթեռնուլ պարզապէս MP (= M[illia] p[assum] «հազար քայլ» կամ [I]mp[erator? «Ինքնակալ»): Այս խումբն իբր տաս վայրկեան հեռու է Ալիֆ գիւղէն, ուր կը նշմարեմ անլուր քանակու- թիւն մը ջրամբարներու եւ աւազաններու՝ որոնք ազատած ժայռին մէջ փորուած են¹⁰: Ուղւոյ այս այլեւայլ հատածներն ան- տարակոյս կը վերաբերին այն ճամբուն՝ որ Պեւտինգերեան Տախտակին համեմատ Ան- տիոքէ կը տանէր Սամոսատ՝ Դոլիքէի (Այն- թապի մօտ) վրայէն:

Նիքիտայ գետափնեայ բերդերը կը սկսէին այն ծոցէն՝ զոր գետը կը կազմէ հիւ- սիսէն դէպի հարաւ հոսելու համար, Կապեր- սանայի շրջակայքը, ուր սովոր էին գետն անցնել¹¹: Ամմ. Մարկեղոս կը նշանակէ կա-

⁹ «Ասորիք, եւ մասնաւորապէս Պաղիստինի մէջ հին ուղիներու դժերուն վրայ կը գտնենք բաղմա- թիւ գինուորական մղոնաքարեր, որոնք շատ յաճախ անարձանագիր են, եւ միայն քանի մը նշաններ կը կրեն, որոնց մեկնութիւնը տարակուսական է: Կը փորձուինք զանոնք անմիջապէս հոռոմեական մղոնա- քարեր համարելու, բայց այս թերեւս չափազանց է: Մղոնակոթոցներու շատերը բիւզանդական ըլլալու են, եւ կրնան նոյն իսկ արարական ըլլալ. որովհետեւ Բիւզանդացիք եւ Արաբացիք պէտք ունէին միայն հին հոռոմեական ճամբաները պահպանել, թերեւս երբեմն ուղղելով զանոնք»: (Clermont-Ganneau, ի Rev. d'arch. orient. I, 1888, p. 206):

¹⁰ Օրագիրս՝ «Ինծի ըսին այս գիւղին մէջ թէ նոյն Արաֆ-սուի կ'անցնուի, Նիքիտայ բոլորովին մօտը՝ ուրիշ հին կամուրջով մը, որ անարատ մնա- ցած է եւ որուն վրայէն կ'անցնին այսօր ալ: Բայց հոն երթալու համար միայն ստակալի ճամբաններ կան. եւ բաց աստի այս տեղեկութիւնը կասկածելի կ'երեւայ»:

¹¹ Թէոդորեոս (Պոմ. Կր. ԺԺ, էջ 1428, հրո- Migne) զայն միայն Նիքիտայ վրայ եղող Կճալ (աւան, գիւղ) կը կոչէ, առանց ուրիշ ճշգրիտ տեղեկութեան: